

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
« » « » 2022թ.
դրոշման

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առեւտրային եւ պատճառագրութիւն	2
Առողջապահութիւն	3
Արտադրութիւն եւ պատճառագրութիւն	5
Բնակարանային տնտեսութիւն	6
Երեւանի եւ պատճառագրութիւն	8
Զբոսաշրջութիւն	21
Կոմունալ տնտեսութիւն	23
Հասարակական տնտեսութիւն	30
Միջազգային ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ	38
Մշակութիւն	41
Երկրագործութիւն եւ արտադրութիւն	53
Տրանսպորտ	59
Քաղաքացիական տնտեսութիւն եւ արտադրութիւն	62
Ֆինանսական փոխանակում եւ տրանսպորտ, երկրագործութիւն, ՀԱՅԵՐ	73
Խելացի քաղաք	81
Առաջնային վարչական շրջան	82
Արտադրական շրջան	95
Արտադրական վարչական շրջան	104
Դաշնային վարչական շրջան	125
Էրեւանի վարչական շրջան	131
Կենտրոն վարչական շրջան	138
ՍԱԼԱԹԻԱ-ՍԵՐԱՍՏԻԱ վարչական շրջան	155
ՆՈՐ ՆՈՐ վարչական շրջան	168
ՆՈՐ-ՄԱՐԱՇ վարչական շրջան	180
ՆՈՒԲԱՐԱՇ վարչական շրջան	186
ՇԵՆԳԱՎԻՍ վարչական շրջան	197
ՔԱՆԱՔԵՆ-ԶԵՅՈՒՆ վարչական շրջան	213

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1	Առևտրի, սպասարկումների և կենցաղային ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով առաջարկությունների ձևավորում և ներկայացում, ինչպես նաև առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործունեության կանոնների և դրանց կիրառման լրացուցիչ պայմանների մշակում:	Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս մշակված չեն առևտրի և ծառայությունների ոլորտի թույլտվությունների տրամադրման կարգերը, ուստի օրենսդրական կարգավորումից հետո կմշակվեն ոլորտը կարգավորող համապատասխան կանոններ և նորմատիվ իրավական ակտեր: Առաջարկություններ կներկայացվեն նաև առևտրի և սպասարկման վերաբերյալ այլ օրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:	Առևտրի և ծառայությունների ոլորտում օրենսդրական կարգավորումներ կատարելու նպատակով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի և ծառայությունների վարչության կողմից մշակված «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքներում և վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը լրամշակվել են և ուղարկվել ՀՀ ազգային ժողով, որոնք քննարկվել և ընդունվել են:	Առևտրի և ծառայությունների վարչություն 2021թվականի ընթացքում	
2	Բացօթյա ապօրինի առևտրի կանխարգելում և արգելում, արդյունավետությունը բարձրացնելու նպատակով օրենսդրական փոփոխությունների կատարում:	Միջոցառումներ կձեռնարկվեն բացօթյա ապօրինի առևտրի արգելման ու կանխարգելման ուղղությամբ, ինչպես նաև 2020 թվականին բացօթյա ապօրինի առևտուրը կանխարգելելու ուղղությամբ մշակված օրենսդրական նախագծերն անհրաժեշտության դեպքում կլրամշակվեն և կդրվեն շրջանառության մեջ: Բացօթյա առևտրի նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում:	Մշակված վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը, որով նախատեսվում է լիազորություն տրամադրել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելու դեպքում բացօթյա առևտրի անմիջական օբյեկտ համարվող ապրանքները վերցնել, լրամշակվել և կրկին ուղարկվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ ՀՀ կառավարություն և ներկայացնելու համար: Հսկողություն է իրականացվել բոլոր 12 վարչական շրջաններում և կազմվել է թվով 1978 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն:	Առևտրի և ծառայությունների վարչություն, վարչական շրջանների առևտրի, ծառայությունների և գովազդի բաժիններ Առևտրի և ծառայությունների վարչություն 2021թվականի ընթացքում	
3	Շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում:	Գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում:	Երևանի քաղաքապետարանը ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ յուրաքանչյուր շաբաթ, կիրակի և ամանորյա նախատոնական օրերին Հրազդան մարզադաշտի հարակից տարածքում կազմակերպել է գյուղատնտեսական արտադրանքի տոնավաճառ:	Առևտրի և ծառայությունների վարչություն, 2-րդ, 4-րդ եռամսյակներ	
4	Հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային	Բացօթյա սրճարանների գործունեության կանոնակարգում: 2020 թվականին հանրային սննդի	Նշված ոլորտը կանոնակարգելու համար մշակվել է համապատասխան օրենսդրական նախագծերի	Առևտրի և ծառայությունների վարչություն	

	ծառայության կազմակերպման կանոնակարգում:	Ժամանակավոր-սեզոնային ծառայության կազմակերպման վերաբերյալ մշակված օրենսդրական նախագծերի փաթեթի ընդունումից հետո կմշակվեն համապատասխան կարգավորումներ:	փաթեթ, որը ներկայացվել է ՀՀ ազգային ժողով, քննարկվել և ընդունվել է: 2021 թվականին 358 տնտեսվարողների հետ կնքվել է հանրային սննդի ժամանակավոր-սեզոնային ծառայություն կազմակերպելու վերաբերյալ պայմանագիր:	1-ին, 3-րդ եռամսյակներ	
5	Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքներում (մայթերում, կանաչապատման համար նախատեսված տարածքներում, ճանապարհների բանուկ մասերին կից հատվածներում) կրպակների, տաղավարների և ժամանակավոր այլ շինությունների թվաքանակի կրճատման և ապամոնտաժման, դրանց հետագա գործունեության նպատակահարմարության և օրինականության վերաբերյալ հարցերի ուսումնասիրություն և ապամոնտաժում:	Զգործող, լքյալ, ապօրինի, հողամասի վարձակալության ժամկետը լրացած, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և սպասարկման կրպակների ապամոնտաժում և առևտրի առանձին օբյեկտների արդիականացում: Մայրաքաղաքում քաղաքակիրթ առևտուր կազմակերպելու նպատակով առաջիկայում միջոցներ կձեռնարկվեն չգործող, լքյալ, հողի վարձակալության ժամկետը լրացած, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և սպասարկման կրպակների ապամոնտաժման ու արդիականացման ուղղությամբ: Առաջնահերթությունը կտրվի կանաչ տարածքներում և մայթերի վրա տեղադրված կրպակների ապամոնտաժմանը:	2021 թվականի ընթացքում ապամոնտաժվել է թվով 4 կրպակ (Զարենցի փողոցի և Մայաթ-Նովա պողոտայի հատման մաս, Մարյան փողոցի թիվ 1ա (թվով 2), Օպերայի հարակից տարածք)	Առևտրի և ծառայությունների վարչություն 2021 թվականի ընթացքում	

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1	Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում	Ծրագրի շրջանակներում 2021 թվականին նախատեսվում է ձեռքբերել ներքոթվարկյալ սարքավորումները. 1. Թվային ռենտգեն ապարատ՝ 8 հատ, 2. Ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք 2 տվիչով՝ 2 հատ, 3. Ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք 3 տվիչով՝ 6 հատ,	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: Ձեռք է բերվել. ԵՔ-ԲՄԱՊԶԲ-21/5-1 1.1 Ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք 2 տվիչով՝ 2 հատ, ԵՔ-ԲՄԱՊԶԲ-21/5-2 1.2 Ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարք 3 տվիչով՝ 6 հատ, ԵՔ-ԲՄԱՊԶԲ-21/5-3 1.3 Ուլտրաձայնային դյուրակիր հետազոտման սարք 2 տվիչով՝ 1 հատ, ԵՔ-ԲՄԱՊԶԲ-21/5-4 1.4 Կոագուլոմետր՝ 5 հատ,	1. 1«Կենդանի Լույս» ՍՊԸ 22.04.2021- 25.12.2021թթ 1.2 «Ավեմեդ» ՍՊԸ 22.04.2021- 25.12.2021թթ 1.3 «Տ-ՄԵԴ» ՓԲԸ 30.04.2021- 25.12.2021թթ 1.4 «Վիոլա» ՍՊԸ 13.04.2021- 25.12.2021թթ 1.5 «Մեդպրո» ՍՊԸ	1. «Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում» ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեով հաստատվել է

		4. Ուլտրաձայնային դյուրակիր հետազոտման սարք 2 տվիչով՝ 1 հատ, 5. Կոագուլոմետր՝ 5 հատ, 6. Լաբորատոր ցենտրիֆուգ՝ 8 հատ, 7. Բինոկուլյար մանրադիկ՝ 8 հատ, 8. Ճեղքային լամպ՝ 6 հատ:	ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5-5 1.5 Ճեղքային լամպ՝ 6 հատ, ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/5-6 1.6 Թվային ռենտգեն ապարատ՝ 5 հատ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/18 2. Բինոկուլյար մանրադիկ՝ 8 հատ	30.04.2021 - 25.12.2021թթ. 1.6 «Տեխա-Մեդ» ՓԲԸ 24.05.2021 - 25.12.2021թթ. 2. «ՌՎ Պրոցեկտս» ՍՊԸ 29.07.2021 - 25.12.2021թթ.	թվով 5 հատ ռենտգեն ապարատ՝ 8 հատ ապարատի փոխարեն: 2. Լաբորատոր ցենտրիֆուգի գնման մրցույթը 2 անգամ հայտարարվել է, սակայն չի կայացել:
2	Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում	Նախատեսվում է «Նոր Արեշ պոլիկլինիկա», «Արշակունյաց պոլիկլինիկա», «Թիվ 12 պոլիկլինիկա», «Նորագավիթ պոլիկլինիկա» և «Նուբարաշեն պոլիկլինիկա» ՓԲԸ-ներում կատարել սանհանգույցների հիմնանորոգման (ընդ որում՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար սանհանգույցից օգտվելու մատչելիության ապահովմամբ), դռների փոխարինման և «Թիվ 15 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի 2-րդ մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքներ	Տես աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության հաշվետվություն /համակարգող ստորաբաժանում/		
3	Բնակչությանը կոմայուտերային և մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայության տրամադրում	Ծրագրի շրջանակներում 2021 թվականին նախատեսվում է ձեռքբերել. Կոմայուտերային տոմոգրաֆիայի հետազոտություն /ԿՏ/՝ 150 հատ, Մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի հետազոտություն /ՄՌՏ/՝ 100 հատ,	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: ԵՔ-ԳՀՄՁԲ-21/36 Ձեռք է բերվել ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/36-1 Կոմայուտերային տոմոգրաֆիայի ծառայություն՝ թվով 150 հատ, ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/36-2 Մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայություն՝ թվով 84 հատ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/36-3 Կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգային ծառայություն՝ մինչև 200 անձի համար 25.12.2021թ. դրությամբ 137 քաղաքացու մատուցվել է կոմայուտերային տոմոգրաֆիայի ծառայություն, 81 քաղաքացու մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայություն, 143 քաղաքացու համար՝ կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգային ծառայություն	1.«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ 15.02.2021թ.- 25.12.2021թ. 2.«Իզմիրյան» ԲԿ ՓԲԸ 23.02.2021թ.- 25.12.2021թ. 3.«Հայ-Ամերիկյան առողջության կենտրոն» հիմնադրամի 23.02.2021թ.- 25.12.2021թ.	Երևան քաղաքի 2021 թվականի բյուջեով նշված ծրագրի անվանումը փոխվել է «Դժվարամատչելի ծառայությունների ձեռքբերում և հաստատվել է ներքոթվարկյալ ծառայությունների ձեռքբերում 1.Կոմայուտերային տոմոգրաֆիայի հետազոտություն /ԿՏ/՝ 150 հատ, 2.Մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի

					հետազոտություն /ՄՌՏ/՝ 84 հատ, 3.Կրծքագեղձի քաղցկեղի սրբինինգային ծառայություն՝ մինչև 200 անձի համար:
4	Այլ աշխատանքներ	«Առողջության ապահովագրության» փաթեթի ձեռք բերում	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: ԵՔ-ԲՄՄՁԲ-21/10 Ձեռք է բերվել. Երևանի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզների և շախմատի դպրոցների, երաժշտական և արվեստի դպրոցների, մարզադպրոցների, մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական դաստիարակության, մշակույթի կենտրոնների, այլ մշակութային կազմակերպությունների, ինչպես նաև «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի և «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի հաստիքացուցակներով նախատեսված հաստիք զբաղեցնող աշխատողների համար «Առողջության ապահովագրության» փաթեթի ձեռք բերում ԵՔ-ԲՄՄՁԲ-21/15 Ձեռք է բերվել. Երևանի քաղաքապետարանի /ներառյալ Երևանի վարչական շրջանները, քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժինները/, Երևանի ենթակայության գրադարանների, թանգարանների, թատրոնների հաստիքացուցակներով նախատեսված հաստիք զբաղեցնող աշխատակիցների, ինչպես նաև «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» փակ բաժնետիրական ընկերության և «Երևանտրանս» փակ բաժնետիրական ընկերության, կառավարման տեխնոլոգիաների, Երևան հիմնադրամի, «Երևանի կառուցապատման ներդրումային ԾԻԳ» ՀՈԱԿ-ի աշխատողների համար «Առողջության ապահովագրություն» փաթեթի ձեռք բերում	1.«Արմենիա Ինշուրանս» ԱՄՊԸ 31.03.2020-31.03.2021թ. 2.«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ 16.07.2020-16.07.2021թ.	
ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶՐ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն կատարման ժամկետ	Նշումներ

1	2	3	4	5	6
1	Շենքերի գովազդային անձնագրերի մշակում և գովազդների համապատասխանեցում գովազդային անձնագրերին	Կենտրոն վարչական շրջանում նախատեսվում է մրցության կարգով իրականացնել թվով 150 հատ շենքերի գովազդային անձնագրերի պատվիրում:	Աշխատանքները չեն իրականացվել համավարակով պայմանավորված	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն ապրիլ-դեկտեմբեր	
2	Էլեկտրոնային թույլտվությունների տրամադրում	Արդեն իսկ ստեղծված էլեկտրոնային բազայի հիման վրա կստեղծվի կայք, որի միջոցով գովազդային կազմակերպությունները և տնտեսվարողները կտեսնեն յուրաքանչյուր շենքի գովազդային անձնագիրը և հնարավորություն կունենան էլեկտրոնային եղանակով ուղարկել հայտեր գովազդի հաստատման, տեղադրման թույլտվություն ստանալու համար: Հնարավորություն կտրվի նաև էլեկտրոնային եղանակով վճարել արտաքին գովազդի համար նախատեսված տեղական տուրքի գումարը: Նախատեսվում է իրականացնել նոր էլեկտրոնային կայքի պիլոտային փորձարկում	2021 թվականին իրականացվել է էլեկտրոնային կառավարման համակարգի արդիականացման աշխատանքներ, որի միջոցով տրվել է 15207 թույլտվություն՝ 5897 կրիչների համար:	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն (հունվար-դեկտեմբեր)	
3	Ներդրումային ծրագրերի իրականացում՝ որպես փոխհատուցում գովազդային մակերեսների տրամադրման սկզբունքով	2021 թվականին նախատեսվում է ներդրումային ծրագրով իրականացնել գովազդային մակերեսների տրամադրմամբ մասնավոր կազմակերպություններին նոր կանգառասրահների, հեծանիվական գառների, և վերգետնյա անցումների մրցույթների հայտարարում	Աշխատանքները չեն իրականացվել համավարակով պայմանավորված	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն ապրիլ-դեկտեմբեր	
4	Գովազդային վաճառականների մրցության կարգով տրամադրման և տեղական տուրքերի և վճարների հավաքագրման նոր մեխանիզմի ներդրում	Նախապես սահմանել գովազդային վաճառականների բոլոր պոտենցիալ վայրերը և տեսակները՝ ելնելով քաղաքի համար դրանց նպատակահարմարությունից, Բաժանել պոտենցիալ գովազդային տեղերը լոտերի և հայտարարել մրցույթ գովազդային կազմակերպությունների միջև	Աշխատանքները չեն իրականացվել համավարակով պայմանավորված	Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն ապրիլ-դեկտեմբեր	
ԲՆԱՊԱՀՂԱՆՈՒԹՅՈՒՆ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն	Նշումներ

				կատարման ժամկետ	
1	2	3	4	5	6
1	Երևանյան լճի և Հրազդանի կիրճի Էկոլոգիական վիճակի բարելավում	Երևանյան լճի և Հրազդանի կիրճի մաքրում տարատեսակ աղբից ու թափոններից	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/1 Իրականացվել է Երևանյան լճի և Հրազդանի կիրճի եղեգների վրա հերբիցիդի (Ուրագան Ֆորտե) ցողում:	Ա/Ձ Գոհար Մարգարյան 19.03.2021թ- 20.10.2021թ.	
2	Աբովյանի անվան 0.8 հա պուրակի վերականգնում	Կիրականացվեն Աբովյանի անվան պուրակի բարեկարգման, կանաչ տարածքների վերականգնման, նոր արդիական ոռոգման ցանցի անցկացման աշխատանքներ	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: ԿՇՄՊ-ԲՄԱՇՁԲ-21/01 Իրականացվել են ծառերի և թփերի գույքագրման և գնահատման աշխատանքներ:	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ «Բիդեք» ՍՊԸ 30.09.2021թ- 20.12.2022թ.	
3	Ուղղաձիգ կանաչապատում	Կիրականացվի շուրջ 500 ք.մ. ծավալով ուղղաձիգ կանաչապատում մայրաքաղաքի տարբեր վերգետնյա հետիոտնային անցումներում և զառիթափ լանջերին: Կանաչ զանգվածի ավելացում կանաչ պատի միջոցով և նորագույն կանաչապատման տեխնոլոգիաների ներդրում:	Իրականացվել է շուրջ 65 ք/մ ուղղաձիգ կանաչապատում՝ Քանաքեռ-Զեյթուն 5 գծ/մ, Շենգավիթ 20 գծ/մ, Աջափնյակ 30 գծ/մ, Արարկիր 10 գծ/մ: Ճոպանուղու հարակից տարածքում, Գետառի երկարությամբ, շուրջ 100ք/մ տարածքում 155 բնափայտային լիանների օգնությամբ իրականացվել է ուղղաձիգ կանաչապատում: Ընդհանուր առմամբ իրականացվել է 165 ք/մ ծավալով ուղղաձիգ կանաչապատում:	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ 2021թ. ապրիլ- նոյեմբեր	Նախատեսվել է իրականացնել մեծամասշտաբ ուղղաձիգ կանաչապատում Սարալանջում և Ծիծեռնակաբերդի հարակից տարածքում, սակայն ոռոգման ջրի բացակայության պատճառով նախատեսված 500ք.մ. ծավալով աշխատանքները մասնակի չեն իրականացվել:
4	Ծառերի կադաստրային տեղեկագրի ստեղծում	Մասնագիտական գործիքների միջոցով կիրականացվի ոռոգման ցանցի, կանաչ տարածքների, ծառերի քարտեզագրում, գույքագրում, ինչի միջոցով հնարավոր կլինի հստակ և թվային տեղեկատվություն ունենալ, որն էլ իր հերթին կնպաստի կանաչ տարածքների առավել արդյունավետ խնամքին և սպասարկմանը, նոր կանաչ տարածքների ստեղծմանը:	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ը Երևան քաղաքի կանաչ տնկարկներում իրականացրել է քարտեզագրման և տվյալների հավաքագրման աշխատանքներ:Քարտեզագրվել է 29400 ծառ և թուփ, 5400 ոռոգման համակարգի փական և ցնցուղ, 157000գծ/մ կենդանի ցանկապատ, 7733գծ/մ ոռոգման համակարգ, 548000ք/մ կանաչապատման ենթակա տարածք:	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ 2021թ. ընթացքում	
5	Ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների բարելավում	Բարելավվել և ավելացնել (4.5 հա) ընդհանուր օգտագործման կանաչ զանգվածը՝ նոր սիզամարգերի ստեղծման, ծառատունկի, ծաղկապատման շնորհիվ	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ը Եռաբլուրում ընդարձակել է 4.5 հա կանաչ տարածք՝ տնկելով ավելի քան 1700 ծառ, Երևանի ներքաղաքային կանաչ տնկարկներում հիմնվել է շուրջ 500 ք/մ սիզամարգ և վերականգնվել է 25000 ք/մ սիզամարգ:	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ 2021թ. ընթացքում	

6	Կանաչապատման տարբեր մոտեցումների կիրառում	Կանաչ տարածքների, սիզամարգերի գեղազարդում ծաղկող թփերով և կանաչ ցանկապատերով (շուրջ 12000 զծ.մ.)՝ նպատակ ունենալով բարելավել մայրաքաղաքի կանաչ զանգվածը	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ը մայրաքաղաքի կանաչապատման գործընթացներում որդեգրել է կիրառել երկարատև ծաղկող այգու սկզբունքը, սիզամարգերի ընդարձակումը և կենդանի ցանկապատերի հիմունքը: Սիզամարգերի գեղազարդությունը բարձրացնելու նպատակով տնկվել են 3367 թփեր, որից 1548-ը ծաղկող: Հիմնվել է շուրջ 13660 զծ/մ կենդանի ցանկապատ՝ ավելի քան 40000 թուփ:	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ 2021թ. ապրիլ-նոյեմբեր	
7	Կանաչ տարածքների խնամքի և ծառատնկման համար ժամանակակից մեքենա-սարքավորումների ձեռքբերում	Նախատեսվում է 2021թ-ին ձեռք բերել կանաչապատման ծառայությունների համար տեխնիկա	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: ԿՇՄՊ-ԲՍԱՊՁԲ-21/01-1 «ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի կարիքների համար հատուկ նշանակության մեքենաներ են ձեռք բերվել: Ֆինանսական միջոցներ նախատեսվում է հետո «Գալուպեր» ՍՊԸ հետ 2021 թվականի հունիսի 14-ին կնքվել է համաձայնագիր, որի արդյունքում մատակարարվել են 1 հատ ջրցան, 1 հատ աղբատար, 5 փոքր և 6 մեծ ինքնաթափ բեռնատար ավտոմեքենաներ:	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ 2021թ. մարտ-օգոստոս «Գալուպեր» ՍՊԸ 04.03.2021թ.	
8	Ռոռզման ցանցի վերակառուցում	Կիրականացվի մաշված, վթարված, խցանված խողովակների փոխարինում և վերականգնում: 2021 թվականին նախատեսվում է շուրջ 30 կմ ռոռզման ջրագծի վերակառուցում՝ կիրառելով ռոռզման արդիական մոտեցումներ	Երևանի ներքաղաքային կանաչ տնկարկներում անցկացվել, փոխարինվել է շուրջ 22.6 կմ երկարությամբ ռոռզման ջրագիծ և վերականգնվել է մոտ 8 կմ երկարությամբ խցանված ջրագիծ:	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ 2021թ. ընթացքում	
9	Երևան քաղաքում աղբի տեսակավորում	Երևան քաղաքում աղբի տեսակավորման (ապակի, պլաստիկ, թուղթ) համար համապատասխան գունազատմամբ աղբամանների տեղադրում քաղաքի ընդհանուր շուրջ 120 կետերում՝ բոլոր վարչական շրջաններում, տեսակավորված աղբի հավաքում և հանձնում վերամշակող կազմակերպություններին: Աղբի տեսակավորման մշակույթի ձևավորման համար քաղաքացիների իրազեկման արշավի կազմակերպում	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ-ի թափոնների տեսակավորման վարչությունը Երևան քաղաքի վարչական շրջաններում տեղադրված ընդհանուր 134 տեսակավորման կետերից և 240 տնտեսվարողներից պարբերաբար հավաքել և վերամշակվող ընկերություններին հանձնել է 368420կգ թափոն, որից ստվարաթուղթ՝ 321140կգ, սպիտակ թուղթ՝ մոտ 500կգ, պլաստիկ՝ 16050կգ, ապակի՝ 30730կգ: Միաժամանակ, «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփին Արմենիա» ՓԲԸ-ի և «Այ Էս Էս Դի» Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ» ՀԿ հետ համատեղ Երևանի շուրջ 50 դպրոցներում տեղադրված պլաստիկ և թղթի թափոնների 200 տեսակավորման արկղերում հավաքվել է շուրջ 3800 կգ թափոն, որից թուղթ՝ մոտ 2900կգ, պլաստիկ՝ մոտ 900կգ:	«ԿՇՄՊ» ՀՈԱԿ 2021 թ.	

ԵՐԵՎԱՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն կատարման ժամկետ	Նշումներ
-----	---------------------------------	----------------------------------	------------------------------------	--	----------

1	2	3	4	5	6
1	Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում արդյունավետ կառավարման համակարգի ամբողջական ներդրում	Երեխաների և սոցիալական պաշտպանության նորաստեղծ համակարգի ներդրման երկրորդ փուլ, վարչական շրջանների համապատասխան բաժինների կառուցվածքային փոփոխություններ:	Երեխաների և սոցիալական պաշտպանության նորաստեղծ համակարգի ներդրման երկրորդ փուլով նախատեսվում է իրականացնել համապատասխան փոփոխություններ վարչական շրջանների սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժիններում և նոր ձևավորվող բաժիններում ներդրվելու է հոգեբանի և սոցիալական աշխատողի (սոցիալական աշխատողը նշանակվելու է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի քարտուղար) հաստիքներ: Այս կապակցությամբ • 2021 թվականի ընթացքում աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ»-ի, ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության /USAID/ ժողովրդավարության և կառավարման գրասենյակի և «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության աջակցությամբ համագործակցության շրջանակներում Երևանի վարչական շրջանների շուրջ 60 աշխատակիցների համար կազմակերպվել է «Սոցիալական աշխատանք» մասնագիտական հատուկ ուսուցման երկամսյա դասընթաց՝ մասնակիցները հաջողությամբ հանձնել են քննություններ և ստացել սոցիալական աշխատողի հավաստագրեր: • USAID/ ժողովրդավարության և կառավարման գրասենյակի և «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության աջակցությամբ Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման կարգի և չափորոշիչների պարզաբանման և կիրառման նպատակով կազմվել է վերապատրաստման մոդուլ և մշակվել ուղեցույց: • Երևան քաղաքի վարչական շրջանների շուրջ 60 աշխատակիցների մասնակցությամբ կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ, որոնց ընթացքում ներկայացվել են կամավոր խնդիրների, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման կարգը, չափորոշիչները և գործիքակազմը: • Երևան համայնքում քաղաքացիներին մատուցվող ծառայությունները էլ ավելի հասցեական և արդյունավետ դարձնելու համար մշակվել է	Իրականացվել է երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության կողմից «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ»-ի, ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության /USAID/ ժողովրդավարության և կառավարման գրասենյակի և «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության աջակցությամբ:	

			անհատական սոցիալական ծրագիր կազմելու աշխատանքային գործիք՝ ընտանիքների կարիքների համակողմանի գնահատման նպատակով: Կազմակերպվել են մի շարք հանդիպում-քննարկումներ անհատական սոցիալական ծրագրերի գործիքակազմի կիրարկման նպատակով: • Երևան քաղաքի վարչական շրջանների սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժիններում քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության կողմից իրականացվել է սուպերվիզիա՝ սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման կարգի և չափորոշիչների կիրառման և համապատասխան սոցիալական անհատական ծրագրեր կազմելու վերաբերյալ: Վարչական շրջանների համապատասխան բաժինների կողմից կազմվել և վարչություն է ներկայացվել 18 անհատական դեպքեր, որոնց քննարկման համար կազմակերպվել են եռօրյա հանդիպումներ Դիլիջանում, իսկ ս.թ. դեկտեմբերի 15-ին տեղի է ունեցել սոցիալական աջակցության տրամադրման Երևանի քաղաքապետին կից խորհուրդի նիստ, որի ընթացքում խորհրդի կողմից հաստատվել են ներկայացված 16 դեպքից հաստատվել են և ներկայացվել ֆինանսավորման 10-ը, ևս 4 դեպքեր կներկայացվի ֆինանսավորման վերահաշվարկի ներկայացման դեպքում: 2. Վարչության կողմից մշակվել է Երևան քաղաքի տեղական սոցիալական ծրագրի մշակման, ընդունման և իրականացման կարգը սահմանելու մասին որոշման նախագիծ և ուղարկվել է ՀՀ Արդարադատության նախարարություն դիրքորոշման, դիրքորոշումից հետո կազմվել է ամփոփաթեթը և դրվել շրջանառության:		
2	Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանություն	Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում երեխաների, արտակարգ, տեխնաձին դրությամբ պայմանավորված /օրինակ պատերազմ, համաճարակ/ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, առանց ծնողական	Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով բաժինն ապահովել է գործող օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների իրականացումը: Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների, միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների հետ	Իրականացվել է երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության երեխաների պաշտպանության բաժնի կողմից:	

		խնամքի մնացած երեխաների համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովում: 1.Քաղաքային մշակութային միջոցառումներում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների ներգրավում: 2.Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների պաշտպանություն: 3.Երեխայի պաշտպանության ոլորտում գերատեսչությունների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն: 4.Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների համար վերապատրաստումներ՝ միասնական պրակտիկայի ձևավորում:	իրականացվել է բացահայտված ԿԴԻՀ երեխաների կարիքների գնահատում և ուղղորդում համապատասխան պետական և հասարակական կառույցներ՝ անհրաժեշտ ծառայություններ ստանալու նպատակով: 1.Քաղաքային մշակութային միջոցառումներում ԿԴԻՀ երեխաներին ներգրավելու նպատակով տրվել են ամանորյա ներկայացումների տոմսեր համաձայն հետևյալ չափորոշիչների՝ ընտանիքում 3 և ավելի երեխա; միայնակ ծնողի; հաշմանդամություն ունեցող; արցախցի ընտանիքների; պատերազմից տուժած; խնամատար ընտանիքների; հաստատությունների և ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող ՀԿ-ների /որոնց հետ եղել է համագործակցություն/ շահառու երեխաներ և այլն: 1.1.Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված շուրջ 300 երեխաներին տրամադրվել են գրենական պիտույքներ: 2.1. Վարչական շրջանների կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն հաշվառվել է առանց ծնողական խնամքի մնացած 77 երեխա, ԱԾԽՄ երեխաների թվին պատկանող՝ 5 անձ: 2.2. Երեխայի կրթության իրավունքի իրացման համատեքստում ծնողի դիմումի և գնահատման կենտրոնի եզրակացության հիման վրա վկայագրվել է 774 երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը: 2.3. 48 երեխայի տրվել է երեխաների խնամքի հաստատությունում տեղավորվելու մասին եզրակացություն: 2.4. 8 երեխայի տրվել է երեխաների խնամքի հաստատությունից դուրս գրելու մասին եզրակացություն: 2.5. Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության, ինչպես նաև ՀՀ ԱՍՀՆ և ոստիկանություն իրականացված համապատասխան հարցումների հիման վրա 6 անձ հաշվառվել է որպես խնամատար ծնող դառնալ ցանկացող անձ: 2.6. Երեխայի խնամքը խնամատար ընտանիքում կազմակերպելու նպատակով տրվել է 6 եզրակացություն: 2.7. Կնքվել է խնամատարության 24 պայմանագիր՝ 2021թ. -ի ֆինանսավորման համար: Երևան քաղաքում 15 խնամատար ընտանիքներում խնամվում է առանց ծնողական խնամքի մնացած 21 երեխա:		
--	--	--	---	--	--

			2.8. Կազմվել է 4 համաձայնագիր խնամատարության պայմանագրի լուծման մասին: 2.9. Հիմք ընդունելով քաղաքացիների կողմից ներկայացված փաստաթղթերը, և կենսապայմանների ուսումնասիրության ակտերը՝ տրվել է երեխա որդեգրելու հնարավորության մասին 40 դրական եզրակացություն, հաշվառման է վերցվել երեխա որդեգրել ցանկացող 57 անձ: 2.10. Կազմվել և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ուղարկվել թվով 17 հարցում՝ երեխային տեսակցելու և որդեգրման հնարավորությունը պարզելու համար: 2.11. Որդեգրման կարգի համաձայն հաշվառվել է որդեգրման ենթակա 29 երեխա: 2.12. Կազմակերպվել է ԿԴԻՀ երեխաների և խնամատար ծնողների տվյալների համադրում՝ խնամատար ընտանիքներում երեխաներին տեղավորելու նպատակով: 2.13. Ելնելով երեխաների շահերից՝ երեխա որդեգրած, ինչպես նաև խնամատար ընտանիքների խնդիրները վեր հանելու, վերահսկողություն իրականացնելու նպատակով գործող օրենսդրության շրջանակներում իրականացվել են տունայցեր: 2.14. ԿԴԻՀ երեխաների, որդեգրել ցանկացող անձ հաշվառված, ինչպես նաև խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց տվյալները մուտքագրվել են «Մանուկ» տեղեկատվական համակարգում, ըստ անհրաժեշտության կատարվել են համապատասխան փոփոխություններ: 2.15. Բաժնի աշխատակիցները մասնակցել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների այն նիստերին, որտեղ քննարկվել են երեխայի հետ կապված հատուկ դեպքեր, պարբերաբար տրամադրվել են մասնագիտական և իրավաբանական խորհրդատվություններ ԽՀՀ քարտուղարներին: 2.16. Երեխաների պաշտպանության վերաբերյալ տարբեր հարցերով Երևանի քաղաքապետարան դիմած քաղաքացիներին տրամադրվել է խորհրդատվություն: 2.17. Կազմակերպվել է միջոցառում երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված: Ձևաչափի համաձայն, հունիսի 1-ին հրավիրվել է Երևան համայնքի ավագանու նիստ երեխաների մասնակցությամբ՝ որպես ավագանու անդամ: Ընթացքում երեխաները ներկայացրել են		
--	--	--	--	--	--

			համայնքային խնդրիներ և քննարկել դրանց լուծմանն ուղղված ծրագրեր: 3.Երեխաների պաշտպանության ոլորտում համագործակցություն է իրականացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության, արդարադատության նախարարությունների, ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով բաժինների, վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի, միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների, մանկատների, երեխաների խնամքի և աջակցության կենտրոնների, ինչպես նաև ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող կազմակերպությունների հետ (ՀՕՖ, Վորլդ Վիժն, ՍՕՍ մանկական գյուղեր և այլն): 4.Հաշվի առնելով երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող համակարգային փոփոխությունները՝ միասնական պրակտիկայի ձևավորման համար նպատակահարմար է հաստիքների հստակ ներդրումից հետո միայն իրականացնել ԽՀՀ անդամների համար նախատեսված վերապատրաստումները:		
3	Ընտանիքում երեխայի ապրելու իրավունքի ապահովում	1.Մանկալքության կանխարգելման նպատակով փորձնական ծրագրի իրականացում 5 ընտանիքների համար • Կացարանի տրամադրման կազմակերպում • Կացարանի վարձավճարի, կոմունալ վճարների փոխհատուցում 3 ամսյա կտրվածքով • Աշխատանքի տեղավորման համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների և հմտությունների նպատակով վերապատրաստման կազմակերպում • Երեխաների տարիքային խմբակներում ներգրավվածության, մանկապարտեզ/դպրոց հաճախման կազմակերպում 2. Խնամատարության տեսակների, խնամատար ընտանիքի խրախուսման, խնամատար	2021թ.-ին բաժնի կողմից ծրագրի իրականացման համար գնահատված դեպքեր չեն եղել, սակայն մանկալքության կանխարգելման նպատակով հաջորդ տարի փորձնական համատեղ ծրագիր իրականացնելու համար քննարկումներ են իրականացվել «Բարի մամա» ՀԿ-ի հետ: 2.Հաշվի առնելով այն, որ նմանօրինակ վերապատրաստումներ իրականացվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի	Իրականացվել է երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության երեխաների պաշտպանության բաժնի կողմից:	

		ընտանիքում հոգեզավակի խնամքի և դաստիարակության պայմանների վերահսկողության, պայմանագրային պարտականությունների կատարման վերաբերյալ վերապատրաստումներ և այլ միջոցառումներ	նախարարության կողմից՝ համապատասխան տվյալները քաղաքապետարանի կողմից տրվել են նախարարություն:		
4	Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրեր	1.Երևան համայնքի սոցիալական կարիքների արդյունքում հայտնաբերված կարիքավոր բնակիչների կենսամակարդակի բարելավում:	Միջազգային հասարակական կազմակերպությունների, անհատ բարերարների և այլ կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում սոցիալական աջակցության կարիք ունեցող թվով շուրջ 21216 ընտանիքներին շարունակվել են տրամադրվել բնափրային, կենցաղային, հիգիենայի փաթեթներ, սնունդ, հագուստ, խոհանոցային պարագաներ, քաղցրավենիքի փաթեթ, ամանոքյա տոմսեր, երկշերտ կտորե դիմակներ և այլն:	Բնափրային փաթեթների բաշխումն իրականացվել է վարչական շրջանների սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժինների կողմից՝ երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության համակարգմամբ:	
			Վարչական շրջանների կողմից սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների թվով 700 դպրոցահասակ երեխաների, 2021թ բյուջեով նախատեսված սոցիալական ծրագրերի շրջանակում, տրամադրվել են գրենական պիտույքների փաթեթներ:	Իրականացվել է երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության կողմից:	
5	Համագործակցության շրջանակում սոցիալական գործընկերություն և ձեռներեցություն	Համագործակցության շրջանակներում բնակչության զբաղվածության խթանում՝ սոցիալական գործընկերության և ձեռներեցության միջոցով: Զբաղվածության խթանում (պիլոտային 5 ընտանիք):	29.10.2021թ. «Նվիրատվության պայմանագրով N Ա-1» ով «Ապագա» բարեգործական հիմնադրամի հետ համատեղ իրականացվել է ճագարաբուծություն սոցիալական ձեռներեցության ծրագիրը 4 ընտանիքների մասնակցությամբ, ինչպես նաև սոցիալական աջակցության կարիք ունեցող 3 ընտանիքների անդամներ մասնակցել են «Ապագա» բարեգործական հիմնադրամի կողմից կազմակերպվող մատնահարդարման դասընթացներին: Ծրագրի իրականացման նպատակով վարչական շրջանների համապատասխան բաժինների և վարչության կողմից իրականացվել է ծրագրի թեկնածու շահառուների կարիքների համալիր գնահատում՝ տունայցերի և հարցազրույցների միջոցով, իրականացվել է ծրագրի շահառուների ընտրություն և ներառում ծրագրում: 2.«Կազմակերպվել է Արցախից տեղահանված (2200 ընտանիքներ) և Երևանաբնակ սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին Վորլդ	Իրականացվել է երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության կողմից՝ համագործակցելով Ապագա բարեգործական հիմնադրամի հետ : Բնափրային փաթեթների բաշխումն իրականացվել է վարչական շրջանների	

			Վիժն Հայաստան, Ադվենտիստական զարգացման և օգնության կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի, Կարմիր խաչ, Հայ կրթական հիմնադրամ, ԱԻՆ, ՄԱԿ համաշխարհային պարենի ծրագիր, Հայ Առաջադեմ ՀԿ, ՀՔՎՕՄԵ, ԱԻՆ, ՀԲԸՄ, USAID, ԱՌԴԱ միջազգային մարդասիրական կազմակերպություն, Անտոնիի ֆրանսահայ համայնք, ICCA Armenia-Russia Ռոտարի Հայաստան կազմակերպությունների կողմից տրամադրված պարենային, հիգիենիկ, տնտեսական փաթեթների բաշխման և հաշվետվությունների ամփոփման գործընթացը:	սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժինների կողմից երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության համակարգմամբ:	
6	Սոցիալական ծառայությունների տրամադրում և պատվիրակում	Տարբեր սոցիալական խմբերի համար Երևան համայնքում որակյալ սոցիալական ծառայությունների տրամադրում (օրինակ՝ պատվիրակման միջոցով): Որակյալ և հասանելի ծառայությունների մատուցում (շուրջ 400-500 շահառու):	• «Փրկություն» ՀԿ-ին տրամադրվել է դրամական աջակցություն՝ վառելիք ձեռք բերելու նպատակով, ապահովելու համար կազմակերպության կողմից սպասարկվող Երևան համայնքի տարբեր վարչական շրջաններում բնակվող մտավոր խնդիրներ, /հաշմանդամություն/ ունեցող երեխաների տեղափոխումը կենտրոն: • «Հայաստանի անվասայլակով բասկետբոլի ֆեդերացիա» ՀԿ-ին տրամադրվել է դրամական աջակցություն՝ վառելիք ձեռք բերելու նպատակով, ապահովելու համար կազմակերպության կողմից սպասարկվող Երևան համայնքի տարբեր վարչական շրջաններում բնակվող հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների տեղափոխումը կենտրոն: • «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ին, շուրջ 200 տարեցների համար, որից 70-ը օգտվում են բարագործական ճաշարանից, տարածքի վարձակալության համար տրամադրվել է /2021թ. տարվա կտրվածքով/ դրամական աջակցություն՝ որտեղ տարեցներին մատուցվում են սոցիալական, առողջապահական, խնամքի, տաք ճաշ և այլ ծառայություններ: • «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի հետ 27.08.2021թ կնքված. հ. ԱՀ-3 Նվիրատվության պայմանագրով տրամադրվել է դրամական աջակցություն, որի շրջանակներում տարեցների միջազգային օրվա կապակցությամբ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, միայնակ և հաշմանդամություն ունեցող տարեցների համար, կազմակերպվել են ներգնա շրջագայություններ ՀՀ տեսարժան վայրեր: Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ, Առաքելություն Հայաստան ԲՀԿ-ի հետ համատեղ, կազմակերպվել է միջոցառում միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների	Իրականացվել է երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության կողմից	

			մասնակցությամբ, որի նպատակն էր ներկայացնել տարեցներին մատուցվող ծառայությունները և տարեցներին ուղղված Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերը: • հ. N-Ձ-126.07.2021թ. Նվիրատվության պայմանագրով «Քայլ առաջ» սոցիալական հասարակական կազմակերպությանը տրամադրվել է դրամական աջակցություն՝ առօրինակ ախտորոշում ունեցող երեխաների և նրանց ընտանիքների հմտությունների զարգացմանն ու ակտիվացմանն ուղղված սոցիալ-առողջապահական ծառայություններ տրամադրելու նպատակով: • հ.ԼԿ-1 25.08.2021թ. Նվիրատվության պայմանագրով «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպությանը տրամադրվել է դրամական աջակցություն, որի շրջանակներում հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների շուրջ 100 երեխաներ օգոստոսի 23-ից մինչև սեպտեմբերի 6-ը հնարավորություն են ունեցել իրենց ամառային հանգիստն անցկացնել Ստեփանավանում գտնվող ներառական ճամբարում: • «Հանս Քրիստիան Կոֆոդ» բարեգործական հիմնադրամին, որտեղ ներկայումս ապրում են շուրջ 100 անօթևաններ/, հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսների կտրվածքով Երևան համայնքի բյուջեից կոմունալ ծառայությունների էլեկտրաէներգիայի, գազի և ջրի փոխհատուցման նպատակով 06.10.2021թ. «Նվիրատվության պայմանագրեր Կ-2-»ով, 01.11.2021թ. «Նվիրատվության պայմանագրեր Կ-3-» ով և 30.09.2021թ. «Նվիրատվության պայմանագրեր Կ-4-ով» 30.08.2021թ. «Նվիրատվության պայմանագրեր Կ-1» 22.12.2021թ. «Նվիրատվության պայմանագրեր Կ-5-ով տրամադրվել է դրամական աջակցություններ:		
7	Բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն	Ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված քաղաքականության նպատակով՝ աջակցություն բազմազավակ, երիտասարդ և այլ խմբերին պատկանող ընտանիքներին՝ թիրախային ծրագրերի մշակման և իրականացման միջոցով: Ժողովրդագրական իրավիճակի	Վարչական շրջանների համապատասխան բաժինների կողմից կազմվել են սոցիալական աջակցության անհատական թվով շուրջ 117 ծրագրեր՝ բազմազավակ ընտանիքներին տարաբնույթ աջակցություն տրամադրելու նպատակով՝ անհրաժեշտ կենցաղային տեխնիկա, կահույք և այլն: Ֆինանսավորման մեխանիզմների հետ առաջացած խնդիրների պատճառով հնարավոր չի եղել իրականացնել ներկայացված ծրագրերի ֆինանսավորումը, սակայն Գրանդ	Իրականացվել է երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության կողմից համագործակցելով Գրանդ Հոլդինգի հետ և համակարգելով	Ֆինանսավորման մեխանիզմների բացակայության պատճառով հնարավոր չի եղել իրականացնել նշված թվով ընտանիքներին աջակցությունը:

		բարելավում (շուրջ 1500-2000 ընտանիք):	Հոլդինգ ընկերության աջակցությամբ սոցիալական աջակցության կարիք ունեցող շուրջ 53 ընտանիքների հնարավոր եղավ տրամադրել անհրաժեշտ կենցաղային տեխնիկա՝ գազօջախ, սառնարան, վառարան, համակարգիչ, լվացքի մեքենա:	վարչական շրջանների սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժինների կողմից իրականացված գնահատման գործընթացը:	
8	Ապաստան հայցող, փախստական և տեղահանված ընտանիքների համար աջակցության ծրագրեր	1.Փախստական ընտանիքներին բնակարանների վարձակալության մասնակի փոխհատուցում 30 ընտանիք/ 1 ընտանիքին հատկացվելու է 6 ամսով, ամիսը՝ 60.000դ./, 2. Ապաստան հայցող, փախստական և տեղահանված ընտանիքների կարիքի գնահատում, սոցիալական ծառայությունների տրամադրում/ 140 ընտանիք/, 3.Փախստական ընտանիքներին ձմռան ամիսներին առաջացած խնդիրների լուծման նպատակով՝ կոմունալ վարձերի մասնակի փոխհատուցում /50+50 ընտանիք, 1 ընտանիքին հատկացվելու է 4 ամսով, ամիսը՝ 35.000 դրամ:	3.ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության կողմից ներկայացված փախստականի կարգավիճակ ունեցող և սոցիալական աջակցության կարիք ունեցող 12 ընտանիքների համար, ձմռան ամիսներին առաջացած խնդիրների լուծման նպատակով, իրականացվել է կոմունալ վարձավճարների աջակցության ծրագիր՝ աջակցությունը տրամադրվել է 3 ամսվա համար՝ յուրաքանչյուր ամիս՝ 15.000 ՀՀ դրամ:	Իրականացվել է երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության կողմից համագործակցելով ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության հետ:	Առաջին և երկրորդ մասով դիմումներ չեն ստացվել:
9	Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցության	1.Արտակարգ իրավիճակների և նմանատիպ այլ դեպքերի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքներին առաջնային աջակցություն(օր. կենցաղային և սննդային փաթեթների տրամադրում, կոմունալ ծախսերի, բնակվարձի փոխհատուցում և այլ առաջնային ծառայությունների տրամադրում՝ ըստ գնահատված կարիքի): 2.Տարերային կամ տեխնածին աղետներից տուժած ընտանիքներին տրամադրվող առաջնային աջակցություն /փլուզում, հրդեհ, ջրհեղեղ և այլն/: 3.Համապատասխան կարիքների առկայության դեպքում ավագանու կողմից հաստատված կարգի	3.Կայացել է Երևանի քաղաքապետի սեփական լիազորությունների շրջանակում կամավոր լիազորությունների շրջանակում աջակցության տրամադրման խորհրդի նիստ, որի ընթացքում քննարկվել են վարչական շրջանների կողմից ներկայացված թվով 16 դեպք, որից աջակցության տրամադրման խորհուրդը հաստատել է 14-ը: Հաստատված դեպքերը ներկայացվել են ֆինանսավորման:	Իրականացվել է երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության կողմից:	

		համաձայն համայնքի կամավոր լիազորությունների շրջանակում սոցիալական աջակցության տրամադրում:			
10	Պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակում ինտեգրված սոցիալական ծառայությունների կազմակերպում և իրականացում	Սոցիալական, ընտանեկան նպաստի, հրատապ օգնության տրամադրում, ինչպես նաև սոցիալական դեպքի վարում (միջինը 14000 շահառու):	2021թ. 1-ին եռամսյակում կազմակերպվել է ՄԱՏԲ-ների գործունեությունը, մասնավորապես՝ կարիքավոր բնակչության հաշվառման, պետական նպաստների և ավանդների դիմաց փոխհատուցումների նշանակման գործընթացը, ինչպես նաև դրանց վճարումը: ՄԱՏԲ-ների կողմից փաստագրվել են շուրջ 4020, որից 2985 նպաստառու, իսկ 1035-ը ոչ նպաստառու: Միջին հաշվով՝ շուրջ 13658 ընտանիքներ ստացել են ընտանեկան, սոցիալական նպաստներ, իսկ 890 ընտանիքներ՝ հրատապ օգնություններ, 2021թ. ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացվել են տարբեր գերատեսչությունների համադրման շուրջ 33 հատ /գրություններ/ ցուցակներ, որոնք համադրվել են ԱԳՀ-ում հաշվառված ընտանիքների տվյալների հետ, ամփոփվել և համապատասխան գրությամբ տրամադրվել են վերը նշված նախարարությանը: Համադրումների արդյունքում ոչ հավաստի տեղեկությունների հիման վրա նշանակված նպաստներից եռամսյակի ընթացքում կասեցվել է, իսկ ավելի վճարված գումարները վերադարձվել են ՀՀ պետական բյուջե: 1-ին եռամսյակի ընթացքում ամփոփվել են հունվար-մարտ ամիսներին ՄԱՏԲ-ների կողմից նշանակված և վճարված պետական նպաստների վերաբերյալ փոխադարձ ակտերը՝ համաձայնեցված «Հայփոստ ՓԲԸ-ի հետ» : Բացի այդ Երևան քաղաքի սոցիալական աջակցության տարածքային բաժինների հետ իրականացվել են ԱԳՀ-ում հաշվառված՝ ընտանեկան, սոցիալական նպաստ ստացող ընտանիքների նույնականացման քարտերի ձեռքբերումն ապահովելու ուղղությամբ մի շարք աշխատանքներ և ամփոփ տեղեկատվությունը /շուրջ 50 ընտանիքների/ ներկայացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն : Հունվար-մարտ ամիսներին Երևանի Աջափնյակ, Ավան, Կենտրոն, Դավաթաշեն, Մալաթիա-Սեբաստիա և Նոր Նորքի ՄԱՏԲ-ներում «Տարածքային մակարդակում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն համակարգող խորհուրդների անհատական	Իրականացվել է երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության կողմից:	

			կազմերում» տեղի են ունեցել փոփոխություններ և հաստատվել Երևանի քաղաքապետի համապատասխան որոշումներով: Խնդրահարույց դեպքերի բազմամասնագիտական խմբերի հետ իրականացվել են մի շարք աշխատանքային քննարկումներ և տրվել են անհրաժեշտ մեթոդական օգնություններ: Բացի այդ, Երևանի ՍՍՏԲ-ների հետ մշտադիտարկման շրջանակներում տարվա ընթացքում ամփոփվել են թվով շուրջ 83 ընտանիքների սոցիալական դեպքի վարման գործընթացներ, որից ընտանիքի ընթացիկ /կարիքի՝ գնահատում, կարիքի բացահայտում/ միջամտություն՝ շուրջ 62, իսկ փակված ընտանիքների դեպքերը՝ շուրջ 21: ՀՀ կառավարության 25.02.2021թ. հ. 251-Ն որոշմամբ ս/թ ապրիլի 1-ից դադարեցվել են Երևանի քաղաքապետին պետության կողմից պատվիրակված լիազորությունները:		
11	Աղբբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով հաշմանդամություն ստացած և սայլակի օգնությամբ տեղաշարժվողների բնակարաններում ֆիզիկական միջավայրի բարեհարմարեացումների պիլոտային ծրագրի	Աղբբեջանական ագրեսիայի հետմղման մարտերում ստացած վիրավորման արդյունքում հաշմանդամության սայլակով տեղաշարժվող անձանց համար իրենց բնակարանների մատչելիության ապահովում: Փորձական ծրագրի շրջանակներում ապահովել մատչելիություն նշված կատեգորիաներով առնվազն 10-ական հատ:	1.հ. Զ-1 07.06.2021 թ. պայմանագրով «Աջակցություն վիրավոր զինվորներին և զինվորական հաշմանդամներին» բարեգործական հասարակական կազմակերպությանը տրամադրվել է դրամական աջակցություն, որի շրջանակներում հոգեբանական աջակցություն է տրամադրվել վիրավոր զինծառայողներին, ովքեր բուժում են ստանում վերոնշյալ կազմակերպությունում, ինչպես նաև իրականացվել են սանհանգույցի հարմարեցման աշխատանքներ վիրավորում ստացած և հենաշարժողական խնդիրներ ունեցող 4 զինծառայողների բնակարաններում: Վերելակների վերանորոգման ծրագրի իրականացման ընթացքում վարչական շրջանների համապատասխան բաժինների կողմից իրականացվել են կարիք ուսումնասիրություններ, որի հիման վրա վերելակների վերանորոգման առաջնայնությունը տրվել է հենաշարժողական խնդիրներ ունեցող՝ բազմաբնակարան շենքերում բնակվող զինծառայողներին:	Իրականացվել է երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության կողմից համագործակցելով Աջակցություն վիրավոր զինվորներին ՀԿ-ի հետ:	Իրականացվել է վարչական շրջանների սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժինների կողմից՝ երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության համակարգմամբ:
12	Աղբբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով հաշմանդամություն ստացած անձանց մասնագիտական	Աղբբեջանական ագրեսիայի հետմղման մարտերում հաշմանդամություն ստացած անձանց աշխատանքային	Երևանի վարչական շրջանների կողմից իրականացվել է վիրավորում ստացած շուրջ 560 զինծառայողների առաջնային կարիքների գնահատում, որի հիման վրա բարեգործական	Իրականացվել է երեխաների և սոցիալական պաշտպանության	

	հմտությունների փոխանցման և զբաղվածության ապահովման ծրագիր	հմտությունների փոխանցում և զբաղվածության ապահովում: Նախատեսվում է աջակցել 30 շահառուի մասնագիտական հմտությունների ձեռքբերմանն ու զբաղվածության ապահովմանը:	կազմակերպությունների կողմից տրամադրվել են բնաիրային փաթեթներ, անկողնային պարագներ և սպորտային հագուստ: Գնահատվել, հավաքագրվել և ամփոփվել են հաշմանդամություն ստացած անձանց կարիքները, աշխատանքային հմտությունները և ներկայացվել են «Ապագա» բարեգործական հիմնադրամին, հետագայում մասնագիտական գնահատում իրականացնելու և զբաղվածության ծրագրերում ներառելու նպատակով:	վարչության կողմից համագործակցելով Ապագա բարեգործական հիմնադրամի հետ:	
13	Ադրբեջանի սանձազերծած պատերազմին մասնակցած զինվորների, զորակոչվածների և կամավորների ու նրանց ընտանիքների հետպատերազմական տրավմայի վերացման նպատակով հոգեբանական աջակցության ծրագիր	Աջակցել ադրբեջանական ազրեսիայի հետմղման մարտերին մասնակցած զինվորների, զորակոչվածների և կամավորների ու նրանց ընտանիքների հետպատերազմյան տրավմայի վերացմանը, հասարակություն նրանց վերաինտեգրմանը, բնականոն կյանքին վերադարձին: Նախատեսվում է 100 շահառուի տրամադրել հոգեբանական աջակցություն և նպաստել նրանց հետպատերազմական տրավմայի հաղթահարմանը:	29.10.2021թ. Պայմանագիր հ. Զ-2 «Աջակցություն վիրավոր զինվորներին և զինվորական հաշմանդամներին» ԲՀԿ-ին տրամադրվել է դրամական աջակցություն հոգեբանական և հոգեբուժական խորհրդատվության և ծառայությունների կարիք ունեցող վիրավոր զինվորներին աջակցություն տրամադրելու նպատակով: 07.07.21թ. Պայմանագիր Զ-է1 «Ամբրա» հոգեկան առողջության կենտրոն ՀԿ-ի հետ համատեղ իրականացվել է հոգեբանական աջակցության ծրագիր՝ Արցախյան պատերազմից տուժած ընտանիքներին՝ զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին աջակցելու նպատակով: Ծրագրի իրականացման նպատակով հանդիպումներ են կազմակերպվել վարչության, ավագանու անդամների, Ամբրա հոգեկան բարեկեցության ՀԿ -ի և Ապագա բարեգործական հիմնադրամի մասնակցությամբ՝ քննարկվել ծրագրի իրականացման հետագա ընթացքը: «Արմ Փրոդաքշն» կազմակերպության կողմից տրամադրվել է Կրկեսային շուռ ծրագրերի տոմսեր Երևան համայնքում բնակվող արցախյան պատերազմում զոհված, անհետ կորած, հաշմանդամություն ձեռք բերած, վիրավորում ստացած և պատերազմի մասնակից, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 1000 երեխաներին:	Իրականացվել է Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության կողմից համագործակցելով Ամբրա հոգեկան առողջության կենտրոնի և Աջակցություն վիրավորներին ՀԿ-ի հետ:	
14	Այլ աշխատանքներ		Վարչությունը տարվա ընթացքում ստացել է 2465 դիմում, որից 1114-ը քաղաքացիների դիմումներ, մնացածը տարբեր գերատեսչություններից, նախարարություններից ստացված որոշման, օրենքի նախագծեր: Քաղաքացիների կարիքների համալիր գնահատման, ինչպես նաև սուրպերվիզիա իրականացնելու նպատակով վարչության աշխատակիցները	Իրականացվել է երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության կողմից:	

			իրականացրել են շուրջ 250 այցելություն և այցեր վարչական շրջանների համապատասխան բաժիններ, շուրջ 120 այցելություններ իրականացվել են խնամատար ընտանիքներ և որդեգրող ընտանիքներ վերահսկողության իրականացնելու, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների կարիքների գնահատման նպատակով, ինչպես նաև վարչության աշխատակցները պատասխանել են քաղաքացիների շուրջ 70000 հեռախոսազանգերին:		
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1	Երևան քաղաքի զբոսաշրջության զարգացման բրենդի մշակում	Նախատեսվում է ծրագիրն իրականացնել բաց մրցույթների և հանրային քննարկումների միջոցով, որի արդյունքում կընդունվի լավագույն առաջարկը: Այս ծրագիրը հնարավորություն կտա շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ ձևավորել Երևանի՝ որպես կազմակերպված հանգստի, զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ քաղաքի նկարագիր և ճանաչելի դարձնել Երևանը միջազգային զբոսաշրջային շուկայում: Երևան քաղաքի ճանաչելիության բարձրացում միջազգային զբոսաշրջային շուկայում	Տարվա ընթացքում իրականացվել են բազմաթիվ քաղաքների (Մոսկվա, Թբիլիսի, Ռիգա, Բրատիսլավա, Փարիզ, Լիոն, Մարսել, Ամստերդամ, Լոնդոն, Դուբայ) զբոսաշրջային բրենդների ուսումնասիրություններ:	Աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն 2021 թ. հունվար - դեկտեմբեր	
2	Միջազգային և միջտարածաշրջանային համագործակցության զարգացում զբոսաշրջության ոլորտում	Մույն ուղղությունը ենթադրում է տարաբնույթ միջոցառումների մշակում և իրականացում մի շարք քույր և գործընկեր քաղաքների հետ, մասնավորապես գործարար հանդիպումների, ճանաչողական այցերի, փորձի փոխանակման, սեմինարների, կոնֆերանսների, կլոր-սեղանների կազմակերպում՝ պետական և մասնավոր շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ	COVID-19-ը կորոնավիրուսի համավարակով պայմանավորված զբոսաշրջության ոլորտում միջազգային համագործակցությունն իրականացվել է առցանց համակարգով: 2021 թ. տուրիզմի բաժինը մասնակցել է ոլորտային հանդիպումների և թրեյնինգների (ZOOM) հարթակի միջոցով: «Քաղաքների զբոսաշրջության համաշխարհային ֆեդերացիայի» (WTCF) առցանց համաժողովներին, «Tasting Eastern Europe»-ը «Entdecke.Net» Destination Management Company (DMC) հաղորդմանը (փողքաստին), «Ռուսաստանի և Հայաստանի միջև համագործակցությունը սննդի և զբոսաշրջության ծառայությունների ոլորտում. Միջպետական համագործակցության հնարավորություններ»	Աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն 2021 թ. հուլիս-դեկտեմբեր	

			թեմայով կլոր սեղան հանդիպում-քննարկմանը, ԻԿՕՄ-ի (ICOM) կողմից կազմակերպվող «Վերախիմաստավորելով ցուցահանդեսային փոխանակումները» (Reimagining Exhibition Exchange) խորագրով (Zoom) հարթակի միջոցով գիտաժողովին, Հայ-ռուսական միջտարածա-շրջանային 8-րդ համաժողովի շրջանակներում կազմակերպված «Պատմամշակութային զբոսաշրջության զարգացում» թեմայով կլոր սեղանին և ներկայացվել է «Երևանում զբոսաշրջության զարգացման ներկա վիճակը և հեռանկարները խորագրով, ՄԱԶՕ-ի (UNDP) կողմից կազմակերպված երկօրյա աշխատաժողովին «Երևան 2.0. դեպի ավելի ներառական ու կանաչ վերականգնում» խորագրով, «Զբոսաշրջությունը երեկ, այսօր և վաղը» թեմայով կլոր սեղան-քննարկմանը, Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված «Քաղաք, մշակույթ և ստեղծարարություն. Վիրտուալ խաչաձև ուսուցում Կորեայի Հանրապետությունից և Ճապոնիայից քառօրյա թրեյնինգին՝ (Zoom) հարթակի միջոցով, GITF 2021 Post-Pandemic Chinese Outbound Tourism Online Conference “POST-PANDEMIC CHINA OUTBOUND TOURISM - NEW TRENDS” կոնֆերանսին, «Центрально-Азиатская Конференция Всемирной федерации туристических городов (WTCTF) 2021» կոնֆերանսին: Երևան քաղաքի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի ֆեյսբուքյան էջում հրապարակվել են Հայաստանում և արտերկրում գործող զբոսաշրջային և մշակութային կառույցների վիրտուալ շրջայցեր, ինչպես նաև Երևանի քույր և գործընկեր ավելի քան 50 քաղաքների զբոսաշրջային ներուժի վերաբերյալ տեղեկատվություն:		
3	Երևանում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ ծրագրերի իրականացում	Երևանում էքսկուրսիոն ուղղության զարգացում: «Երևան Միթի Տուր» քաղաքային զբոսաշրջային պաշտոնական էրթուդու կատարելագործում ու արդիականացում, որը մեծ հետաքրքրություն է առաջացնում ինչպես մայրաքաղաքի հյուրերի, այնպես էլ բնակիչների շրջանում: Իրականացվելու են տոն և հիշատակի օրերին նվիրված (ինչպես նաև առանձին դեպքերում) անվճար ակցիաներ՝ մասնակից դարձնելով երեխաներին, սոցիալապես անապահով խավերին և	COVID-19-ը կորոնավիրուսի համավարակով պայմանավորված 2021 թ. «Երևան Միթի Տուր» զբոսաշրջային քաղաքային էրթուդին գործել է փոփոխված ժամանակացույցով՝ հուլիս–հոկտեմբեր ամիսներին: Մասնակի վերանորոգվել է Ֆրանսիայի հրապակում գտվող զբոսաշրջային տեղեկատվական ինֆո կենտրոնը: Մշակվել է և ներդրվել է www.visiterevan.am զբոսաշրջային հարթակը, որը կազմված է համանուն վեբ կայքից և հավելվածից:	Աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն 2021 թ. մայիս-դեկտեմբեր	

		հաշմանդամություն ունեցող անձանց: Երևան քաղաքում գործող զբոսաշրջային տեղեկատվական աջակցության և քաղաքացիների սպասարկման կենտրոնների բարեկարգում և արդիականացում, ինչպես նաև զբոսաշրջային տեղեկատվական աջակցության և քաղաքացիների սպասարկման նոր կենտրոնների շահագործում:			
4	Մարքեթինգային քաղաքականության իրականացում	Երևանի մասին տեղեկատվության տրամադրում ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան զանազան ամսագրերին և թերթերին, մայրաքաղաքի մասին հոդվածների պատրաստում, Երևանը որպես զբոսաշրջային արդյունք դիրքավորումը, գովազդումը ու ներկայացումը, ինչպես նաև Երևան քաղաքի մասին տեղեկատվական կայքի ստեղծում և կարճամետրաժ հոլովակի պատրաստում: Երևանի մասին հոդվածների տպագրում, գովազդային հոլովակների պատրաստում և լուսաբանում:	Երևան քաղաքի քույր և գործընկեր քաղաքների նախաձեռնությամբ իրականացվել է խաչաձև մարքեթինգային (cross-promotion) նախագիծ: Իրականացվել է Երևանը գովազդող չինարեն լեզվով կարճամետրաժ զբոսաշրջային տեսահոլովակի պատրաստման և ներկայացման աշխատանքները:	Աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչություն 2021 թ. մայիս-դեկտեմբեր	
			Իրականացվել է «այցելի ր Երևան» (Visit Yerevan) համանուն կայքի և հավելվածի բովանդակության մշակման աշխատանքները, ստեղծվել են համանուն սոցիալական ցանցերի պաշտոնական էջերը:	2021 թ. մայիս-դեկտեմբեր	
			Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: ԵՔ-ԳՀՄՁԲ-21/150 Տպագրվել է «Երևանը՝ քո գրպանում» ուղեցույցի ռուսալեզու տարբերակը:	«Աստղիկ» տպարան 16.07.2021թ.- 21.07.2021թ.	
			«Քաղաքների զբոսաշրջության համաշխարհային ֆեդերացիայի» (WTCF) հերթական տեղեկագրում Երևանի վերաբերյալ հոդված է ներկայացվել անգլերեն և չինարեն լեզուներով՝ «Ամառը Երևանում, զգա ջերմություն և հյուրընկալություն» (Summer in Yerevan: Feel the Warmness and Hospitality) խորագրի ներքո:	2021թ. հունիս	
			Ձմեռային Երևանը հանրահռչակելու նպատակով «Քաղաքների զբոսաշրջության համաշխարհային ֆեդերացիա»-ի (WTCF) հերթական տեղեկագրում ներկայացվել է հոդված «10 բան, որ կարելի է անել Երևանում Ամանորի և Սուրբ Ծննդյան օրերին» խորագրի ներքո:	2021թ. դեկտեմբեր	

ԿՈՍՄՈՆԱՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1	Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների	Բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերի	Կոմունալ տնտեսության վարչության բազմաբնակարան շենքերի կառավարման		

	մասնագիտական կարողությունների բարելավում	կողմից ընդհանուր բաժնային սեփականության նկատմամբ իրենց իրավունքների և պարտականությունների իրազեկվածության բարձրացում:	մարմինների հետ աշխատանքների բաժնի մասնագետների կողմից մշտական խորհրդատվություն, մեթոդական ցուցումներ են տրվում կառավարման մարմինների ղեկավարներին, աշխատակիցներին և տեղեկատվություն բազմաբնակարան շենքերի շինությունների սեփականատերերին		
2	Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում	Ծրագրով նախատեսվում է Երևան քաղաքի Բազմաբնակարան շենքերի 84 000 քմ հարթ և 55 000քմ թեք տանիքների հիմնանորոգման աշխատանքներ:	Փաստացի վերանորոգվել է 100818 քմ հարթ տանիք և 54956.7քմ թեք տանիք:	Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն/ներ/, Համատիրությունն էր	Աշխատանքների պատվիրատու են հանդիսանում վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը
3	Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում	Նախատեսվում է իրականացնել 975 մուտքերի վերանորոգում	Փաստացի վերանորոգվել է 649 մուտք «ՀէՑ» ՓԲԸ-ի կողմից ներդրումային ծրագրով իրականացվել են Բազմաբնակարան շենքերի թվով 615 մուտքերի էլ.տնտեսության վերանորոգման աշխատանքներ	Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպություն/ներ/, Համատիրությունն էր	Աշխատանքների պատվիրատու են հանդիսանում վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը
4	Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի վերելակների փոխարինում	Նախատեսվում է փոխարինել 100 հատ վերելակ	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է պայմանագիր: ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/12 Թվով 54 վերելակ փոխարինվել է նոր վերելակներով	«ՆՈՐՏԵՔՍ ԷՆՋԻՆԻՐԻՆԳ» ՓԲԸ 28.06.2021թ.- 27.12.2021թ.	2021 թվականին Երևանի քաղաքապետի կողմից որոշվել էր փոխարինել պատերազմի ընթացքում վիրավորում ստացած զին. ծառայողների բնակության շենքերի թվով 54 վերելակները, ապա որոշվել էր թվով 46 վերելակների համար առանց գումարի մրցույթ հայտարարել, որոնց ձեռքբերման համար Երևանի 2021թ. բյուջեով նախատեսված ֆինանսական

					միջոցները կանցնեն և կնախատեսվեն Երևանի 2022թ. լրամշակված բյուջեով:
5	Սանիտարական մաքրում և աղբահանություն	Շարունակաբար բարելավվելու են սանիտարական մաքրման և աղբահանության իրականացման աշխատանքները: Հսկողություն է իրականացվելու փողոցների, մայթերի, հրապարակների, բակային և ընդհանուր օգտագործման այլ տարածքների սանիտարական մաքրման, ինչպես նաև 4,932 բազմաբնակարան շենքերից և մոտ 55,000 մասնավոր տնատիրություններից իրականացվող աղբահանության աշխատանքների կատարման որակի նկատմամբ:	Շարունակվում է «ԵԱՍՄ» համայնքային հիմնարկի համար հատուկ նշանակության մեքենա մեխանիզմների ձեռքբերման գործընթացը: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության կողմից ամենօրյա վերահսկողություն է իրականացվել «ԵԱՍՄ» համայնքային հիմնարկի կողմից 4,932 բազմաբնակարան շենքերից և մոտ 55,000 մասնավոր տնատիրություններից գնեռացվող աղբի հեռացման և փողոցների, մայթերի, հրապարակների, բակային և ընդհանուր օգտագործման այլ տարածքների սանմաքրման աշխատանքների նկատմամբ, ինչպես նաև վարչական շրջանների հետ համատեղ վերահսկողություն է սահմանվում «Դավարս» ՍՊԸ-ի կողմից կատարվող աշխատանքների նկատմամբ:		
6	Նոր կոյուղագծերի, հեղեղատարների կառուցում և գործող ցանցերի վերակառուցում	Թաղամասերում /փողոցում/ գոյություն չունեցող կոյուղագծերի և հեղեղատար համակարգերի հատվածային կառուցում և գործող ցանցերի վերակառուցում:	Համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի՝ կայացել է մրցույթ և կնքվել է 9 պայմանագիր: 1. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/60-1 Շենգավիթ վարչական շրջանի Նորագավիթ 13-րդ և 14-րդ փողոցների կոյուղագծի կառուցում: 2. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/60-3 Դավթաշեն վարչական շրջանի 1-ին թաղ. Հհ. 10ա շենքից մինչև Տ.Պետրոսյան փող./ կոյուղագծի վերակառուցում: 3. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/60-4 Կենտրոն վարչական շրջանի Կիլիկիա թաղամասի թիվ 3,4 շենքերի արտաքին ջրահեռացման և թիվ 36 տարածքի ներքին ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի վերակառուցման աշխատանքներ 4. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/60-2 Դավթաշեն վարչական շրջանի 2-րդ թաղ 72-ից դեպի 4ր շենք/ կոյուղագծի վերակառուցում: 5. ԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/60-4 Կենտրոն վարչական շրջանի Էջմիածնի խճուղի /Նորագյուղի կենտրոնի ձախակողմյան հատված/ կոյուղագծի կառուցում: 6. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/63 Արաբկիր վարչական շրջանի Բաղրամյան 3-րդ նրբանցքի կոյուղագծի կառուցում 7. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/63	«Շահարտ» ՍՊԸ 09.06.2021թ. - 01.09.2021թ. «Էմօշին» ՍՊԸ 08.06.2021թ.- 09.08.2021թ. «Էթերնալ Հոմ ՍՍ» ՍՊԸ 01.06.2021թ. - 02.08.2021թ. «Գրանտ Շին» ՍՊԸ 03.06.2021թ. - 06.09.2021թ. «Էթերնալ Հոմ ՍՍ» ՍՊԸ 01.06.2021թ. - 08.09.2021թ. «Էմօշին» ՍՊԸ 17.09.2021թ. - 29.11.2021թ. «Էմօշին» ՍՊԸ	

			Դավթաշեն վարչական շրջանի 4-րդ փողոցի կոյուղագծի կառուցում	17.09.2021թ. - 29.11.2021թ	
			8. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/80-1 Աջափնյակ վարչական շրջանի Էստոնական փողոց 6 շենքի կոյուղագծի վերակառուցում	«Հիբրիդ Սիսթեմ» ՍՊԸ 10.11.2021թ. - 23.12.2021թ.	
			9. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-21/80-2 Նուբարաշեն վարչական շրջանի Դ թաղամաս 11-րդ փողոցի վերջնամասի կոյուղագծի վերակառուցում	«Տուրիստաս» ՍՊԸ 08.11.2021թ. - 26.11.2021թ.	
7	Քաղաքային կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիր	Նուբարաշենի խճուղուն հարող և Աջափնյակի աղբավայրերի փակում, նոր քաղաքային աղբավայրի կառուցում:	2022թ. 2-րդ եռամսյակում նախատեսվում է շինարարության պայմանագրի կնքում: Ներկայումս ընթանում է շինարարական աշխատանքների կապալառուի ձեռքբերման մրցույթի գործընթաց, որի առաջին փուլը ավարտվել է: 2022թ. սկզբին կմեկնարկի երկրորդ փուլը, որտեղ կլինեն գնային առաջարկներ:	Շինարարական աշխատանքների իրականացման համար անախտեսված է երկու տարի:	
8	Քաղաքային արտաքին լուսավորություն	28 փողոցներում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները. • առկա էներգատար լուսատուները փոխարինել խնայող LED տիպի լուսատուներով, • փոխել/ամրացնել լուսավորության հենասյուները, • փոխել լուսավորության հենասյուների բարձակները, • տեղադրել ստորգետնյա հաղորդողներ՝ պլաստիկ խողովակաշարերով, • տեղադրել լուսավորության համակարգի նոր մալուխներ ստորգետնյա հաղորդողներում, • առկա վերգետնյա այլ նշանակության մալուխներն անցկացնել ստորգետնյա հաղորդողներով, • ներդնել լուսավորության ցանցի կառավարման համակարգ:	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի քաղաքային լուսավորություն վարկային ծրագրերի շրջանակում 28 փողոցներից Վարդանանց փողոցում. Սյանիկյան պողոտայում և Աճառյան փողոցում, Խորենացի փողոցում, Ամիրյան փողոցում մեկնարկել են արդիականացման աշխատանքները: Իրականացվում են հենասյուների բետոնե հիմքերի տեղադրման աշխատանքները:	Կապալառու ONNINEN OY Հնկերություն, Լուսադիոդային (ԼԵԴ) լուսավորության համակարգի մատակարարումը և տեղադրումը Երևանում #YRV/LED/1 Պայմանագիրը կնքվել է 2019թ-ի հունվարի 11-ին, ընթացքի մեջ է:	Ստորգետնյա պլաստիկ խաղովակաշարի համար նախատեսված խրամոլիների հողային աշխատանքների իրականացման ընթացքում առաջացել են ստորգետնյա կոմունիկացիոն խոչնդոտներ, որոնք աշխատանքների կատարման նախագծերում ներառված չեն եղել, արդյունքում աշխատանքները դադարեցվել են և անհրաժեշտություն է առաջացել նախագծերում կատարել համապատասխան փոփոխություններ: Նախագծերում կատարված փոփոխություններ

					ի համաձայն, խրամուղիների քանդումը պետք է իրականացվեր միկրո խրամուղու եղանակով: Նշված եղանակով աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ հատուկ տեխնիկան Կապալառու կազմակերպությունը ներմուծել է հոկտեմբեր ամսվա վերջին: Տեխնիկան ներմուծելուց հետո աշխատանքները կրկին սկսել են իրականացվել: Մակայն կրկին ի հայտ են եկել ստորգետնյա կոմունիկացիոն խոչնդոտներ և աշխատանքները դադարեցվել են: Ներկայում ընթանում են քննարկումներ և նամակագրություն ծրագրի ղեկավարի և կապալառու կազմակերպության հետ նախագծերում նոր փոփոխություններ կատարելու և աշխատանքները վերսկսելու համար:
9	Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործում, պահպանում և արդիականացում	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի	Երբաղույս ՓԲԸ-ն 2021թ-ի ընթացքում իրականացրել է Երևան քաղաքի 2687օբյեկտների 1704.27 կմ ընդհանուր երկարությամբ արտաքին	Երբաղույս ՓԲԸ, աշխատանքները կատարվելու են	

		շահագործման, պահպանման և ընթացիկ նորոգման ծառայությունները՝ - Չլուսավորվող փողոցների, բակերի, նրբանցքների, - խաղահրապարակների լուսավորում, - Մալուխային ցանցի փոխարինում, - Դիսպետչերական ծառայության ավտոմատացում, ինտելեկտուալ համակարգի և կառավարման համակարգի ներդրում, - Նոր տրանսպորտա-տեխնիկական միջոցների, սարքավորումների, գործիքների և այլ տեխնիկական միջոցների ներդրում, - Լուսային ժամանակակից և էներգաարդյունավետ խնայողական ԼԵԴ լուսատուների տեղադրում	լուսավորության ցանցի շահագործման, պահպանման և ընթացիկ նորոգման ծառայությունները: Իրականացվել է արտաքին լուսավորության ցանցի վերականգնման աշխատանքներ, Արդիականացվել է Լեփսիոսի փողոցի 41 շենքի հարակից այգու, 2750 ամյակի այգու արտաքին լուսավորության ցանցը, Կրպեյանի անվան այգում իրականացվել է նոր տեղադրված հուշաքարերի լուսավորությունը. Արդիականացվել է Հանրապետության հրապարակի և Աբովյան փողոցի արտաքին լուսավորությունը, ցանցում առկա բարձր ճնշման նատրիումական լուսատուները փոխարինվել են էներգաարդյունավետ, խնայողական, ցածր Կելվինով ԼԵԴ լամպերով: Արդիականացվել է Հույսի և Հավատի, Բտալական, Զատիկյանի անվան Ազատամարտիկների անվան, Խաղաղ Դոնի փողոցի թիվ 23 հասցեի, Միկոյան փողոցի թիվ 14 և 16 շենքերի հարակից այգիների, Օղակաձև զբոսայգու 2-րդ, 4-րդ և 5-րդ հատվածների, Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի հարակից հատվածի արտաքին լուսավորության ցանցը, Արդիականացվել է Մայր հայաստան հուշարձանի, 50-ամյակի հուշարձանի և հարակից տարածքի, Վարդան Մամիկոնյանի արձանի և հարակից տարածքի, Սուրբ Սարգիս եկեղեցու հարակից ռելիեֆի, Դրամատիկական թատրոնի դիմացի տարածքի, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի շենքի և շրջակայքի, Ազատության հրապարակի և մի շարք այլ արձանների արտաքին լուսավորության ցանցը, Արդիականացվել է Չարենցի փողոցի և Գետառի նորակառույց ճանապարհի հատման մասի տրանսպորտային թունելի, Խանջյան փողոցի և Մայաթ Նովա պողոտայի հատման մասի Գետառի նորակառույց ճանապարհի, Խանջյան փողոցի և Տիգրան Մեծ պողոտայի, Աբովյան պուրակից դեպի Մյասնիկյան պողոտա հատվածի, Սարալանջի փողոցից դեպի Հերացի փողոց հատվածի, Մարալանջի փողոցի և Ազատության պողոտայի հատման հատվածի, Ալեք Մանուկյան-Իսահակյան փողոցների և Գետառի նորակառույց ճանապարհի հատման մասի տրանսպորտային թունելների արտաքին լուսավորության ցանցը, Փոխարինվել են արտաքին լուսավորության ցանցի վնասված մալուխներ, Մի քանի ուղղություններում տեղադրվել և փոքրվել են GSM	ամբողջ տարվա ընթացքում:	
--	--	--	---	--------------------------------	--

			կառավարման համակարգ, Արտաքին լուսավորության ցանցում առկա բարձր ճնշման նատրիումական լուսատուները, Կենտրոն վարչական շրջանի, Արաբկիր վարչական շրջանի, Աջափնյան վարչական շրջանի, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի, Էրեբունի վարչական շրջանի, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի, Շենքավիթ վարչական շրջանի, Նոր Նորք վարչական շրջանի մի շարք փողոցներում և բակային տարածքներում փոխարինվել են ժամանակակից և էներգաարդյունավետ խնայողական LED լուսատուներով և լուսարձակներով: Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանի հետ կնքված սուբսիդիոն պայմանագրի շրջանակում վերակառուցվել է թվով 4 այգու արտաքին լուսավորության ցանց: ՄԱԿ-ի զարգացման Հայաստանյան գրասենյակի հետ համատեղ իրականացվող «Աջակցություն Հայաստանի համայնքներին կլիմայական «խելացի» լուծումների ներդրման և իրականացման հարցում» ծրագրի շրջանակում, արդիականացվել են Երևան քաղաքի մի շարք փողոցների և բակային տարածքների արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքները: Աշխատանքների ընթացքում, արտաքին լուսավորության ցանցում առկա բարձր ճնշման նատրիումական լուսատուները փոխարինվում են ժամանակակից և էներգաարդյունավետ խնայողական LED լուսատուներով:		
10	ԵՄ-ն Երևանի համար. Արևային համայնք»	Ծրագրով նախատեսվում է 90-100 բազմաբնակարան շենքերի տանիքներին տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգեր՝ ապահովելով տվյալ շենքերի վերելակների, ընդհանուր օգտագործման և բակային տարածքների էլեկտրաէներգիայի մատակարարումը, ինչպես նաև շքամուտքերում և բակային տարածքներում տեղադրել LED լուսատուներ: Հաշվի առնելով տարածքային համաչափ զարգացման սկզբունքը՝ շենքերի ընտրությունը կատարվել է՝ ընդգրկելով բոլոր վարչական շրջանները: Ընտրությունն իրականացնելիս հաշվի է առնվել	Եվրոպական միության աջակցությամբ՝ «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնության շրջանակում, Երևանի քաղաքապետարանն իրականացնում է «Եվրոպական միությունը Երևանի համար. Արևային համայնք» ծրագիրը: Ծրագիրը դրամանշնորհային է և հաստատվել է Երևան քաղաքի ավագանու կողմից: Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 1.250.000 եվրո, որից 250.000 եվրոն համաֆինանսավորվել է Երևանի քաղաքապետարանի կողմից: Ծրագրով նախատեսվում է ավելի քան 90 բազմաբնակարան շենքի տանիքներին տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգեր՝ ապահովելով տվյալ շենքի վերելակների, ներշենքային և աստիճանավանդակային հատվածների և բակային տարածքների լուսավորության համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի մատակարարումը:		

		նաև սոցիալական բաղադրիչի առկայությունն այդ շենքերում	Հաշվի առնելով տարածքային համաչափ զարգացման սկզբունքը՝ կատարվել է շենքերի ընտրությունը՝ ընդգրկելով բոլոր վարչական շրջանները: Ընտրությունն իրականացնելիս տեխնիկական չափորոշիչներից գատ՝ հաշվի է առնվել նաև սոցիալական ազդեցությունը շենքերում: Ծրագրի իրականացումն ապահովում է ընդհանուր օգտագործման տարածքներում էլեկտրաէներգիայի սպառման նվազում 77%-ով, ինչպես նաև վճարումների նվազում 50%-ով: Արևային կայաններն ու լուսավորության համակարգերը նվիրաբերվելու են բնակիչներին: Շենքերից յուրաքանչյուրի համար ստեղծվել և ստեղծվելու են նպատակային բանկային հաշիվներ, որտեղ կուտակվելու են բնակիչներից գանձված գումարները և Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ին վաճառված էլեկտրաէներգիայից գոյացած եկամուտը: Իսկ կուտակված գումարը կուղղվի նվիրաբերված համակարգերի սպասարկմանը և բնակիչների որոշմամբ շենքերում էներգախնայողության միջոցառումների իրականացմանը: Ծրագրի իրականացման արդյունքում բազմաբնակարան շենքերի շուրջ 25.920 բնակիչ կապրի ավելի հարմարավետ պայմաններում և կունենան էլեկտրաէներգիայի ավելի ցածր վճարներ: Առաջին փուլով ընտրված բազմաբնակարան շենքերի տանիքներին արդեն իսկ տեղադրվել են արևային ֆոտովոլտային համակարգեր: Ավարտին է հասցվել նաև աշխատանքների ընդունման-հանձնման գործընթացը: Այս համակարգերն արդեն իսկ գործում են և միացված են «Հայաստանի էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ին: Նույնքան ամսին մեկնարկել է երկրորդ փուլը, որով նախատեսվում է արևային ֆոտովոլտային և լուսավորության համակարգերի տեղադրում 55 բազմաբնակարան շենքերում, որից 34-ում արդեն իսկ տեղադրվել են ՖՎ համակարգեր, իսկ 30 շենքերում արդեն արդիականացված է ներքին և արտաքին լուսավորության համակարգը:		
ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6

1	Ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում	Դպրոցների տնօրենների կառավարման հմտությունների և անձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացում:	1. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության նախաձեռնությամբ կազմակերպվել է դպրոցների տնօրենների արտագնա աշխատաժողով՝ միտված կառավարչական հմտությունների, կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպման, էլեկտրոնային հարթակների կիրառման, իրավական ակտերի իմացության խթանմանը՝ ԿԳՄՄՆ-ի, Կրթության տեսչական մարմնի, ԿՏԱԿ-ի, ԿԶՆԱԿ-ի հետ համագործակցությամբ: 2. Ապահովվել է անգլերենի ուսուցիչների մասնակցությունը Բրիտանական խորհրդի կողմից կազմակերպված վերապատրաստմանը, ռուսերենով ուսուցմամբ դասարանների դասվարների մասնակցությունը Երևանում գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի և Յանդեքս տեխնոլոգիական ընկերություն համագործակցությամբ կազմակերպված առցանց կոնֆերանսներին: 3. Ապահովվել է ՀՀ ԿԳՄՄՆ և ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների ազգային նորարարական կենտրոնի համագործակցությամբ կազմակերպված «Կրթությունից աշխատանք» ծրագրին 9-րդ դասարանների դասղեկների մասնակցությունը՝ մասնագիտական կողմնորոշման հմտություններ փոխանցելու նպատակով:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Կրթության տեխնոլոգիաների ազգային կենտրոն, British Council Հայաստան 3-րդ, 4-րդ եռամսյակներ	
2	Դպրոցների շենքերի հիմնանորոգում, վերանորոգում, մասնակի նորոգում (նաև՝ հարմարեցում)	1. Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակում պետական հանրակրթական դպրոցների հիմնանորոգում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 13.07.2017թ. հ.805-Ն որոշման: Սույն ծրագրի շրջանակում շարունակելու և/կամ մեկնարկելու են հետևյալ դրոցների հիմնանորոգման աշխատանքները՝ հհ. 6, 18, 22, 51, 68, 95, 111, 116, 122, 135, 143, 191 դպրոցները և «Հակոբ Կոջոյան» կրթահամալիրը: 2. Մասնագիտական խորհրդատվական հանդիպման կազմակերպում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների (օրինակ՝ տեսողության խանգարում) համար	1. Շահագործման են հանձնվել հհ. 51, 135, 143 դպրոցները: Շարունակվում են հհ. 6, 18, 22, 95, 111, 116, 122, 191 դպրոցների հիմնանորոգման աշխատանքները: Մեկնարկել է «Հակոբ Կոջոյան» կրթահամալիրի հիմնանորոգումը: 2. Բարերարների օժանդակության կապիտալ վերանորոգման աշխատանքներ են իրականացվել հհ. 102, 146 դպրոցներում: 3. «Հատուկ կրթություն. ներկա և ապագա» ԿԳՄՄՆ և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից կազմակերպված աշխատաժողովի շրջանակում քննարկվել և պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ հատուկ դպրոցների մասնագետների կողմից ըստ անհրաժեշտության հանրակրթական դպրոցներին խորհրդատվություն տրամադրելու վերաբերյալ: 4. Հանրակրթական դպրոցներում իրականացվել են հարմարեցման աշխատանքներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին. ներկայումս շուրջ 120 դպրոցներ ապահովված են մուտքի թեքահարթակներով, ըստ անհրաժեշտության	1. ՀՀ կառավարություն, Ասիական զարգացման բանկ, 2. Անհատ բարերար 2021թ. ընթացքում 3. Աշխատակազմի հանրակրթության վարչություն, ՀՄԿ, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, դպրոցներ, 2021թ. ընթացքում 4. Երևանի ենթակայության դպրոցներ 2021թ. ընթացքում	

		հարմարեցումների մասնագիտական ուղղորդում ստանալու նպատակով: 3. Երևանի ենթակայության առնվազն 100 դպրոցներում հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցման աշխատանքների իրականացում՝ մասնավորաբար թեքահարթակների կառուցում, սանհանգույցների և գույքի հարմարեցումներ:	հարմարեցվել են սանհանգույցներ, երեք դպրոցում առկա է վերելակ:		
3	Ներառական կրթության արդյունավետության խթանում	1. «Ուսուցիչների՝ ներառող դասավանդման վերապատրաստման կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակում նախկինում ներառական կրթություն չիրականացրած 98 դպրոցներում անձնակազմի մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացում՝ ներառական կրթության կազմակերպման և իրականացման ոլորտում: 2. Ուսուցչի օգնականի հաստիքի ներդրում և մասնագետի ներգրավում Երևանի քաղաքապետարանի ենթակայության գործող առնվազն 100 դպրոցներում, կարողությունների զարգացման ծրագրերի իրականացում՝ համագործակից կառույցների ներադրավմամբ: 3. Փորձի փոխանակման հանդիպումներ, սեմինարներ ներառական կրթության ոլորտում հաջողություններ ունեցող դպրոցների, փորձագետների ներգրավմամբ	1. Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի հետ համագործակցաբար շարունակվել է «Ուսուցիչների՝ ներառող դասավանդման վերապատրաստման կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակում մենթորների աշխատանքը նախկինում ներառական կրթություն չիրականացրած 98 դպրոցներից ծրագրում մինչ այդ չընդգրկված 47 դպրոցներում: 2. Ուսուցչի օգնականի հաստիքը ներդրված է Երևանի ենթակայության բոլոր 153 դպրոցներում: Ուսուցչի օգնականները սերտորեն համագործակցում են Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հետ, մասնակցում կարողությունների զարգացման ծրագրերին: 3. Հուլիսի կամուրջ ՀԿ-ի հետ համագործակցաբար կազմակերպվել են փորձի փոխանակման 14 հանդիպումներ Շիրակի, Գեղարքունիքի, Կոտայքի մարզերի դպրոցների ներկայացուցիչների համար ներառական կրթության լավագույն ավանդույթներ ունեցող երևանյան 5 դպրոցների ներգրավմամբ: Իրականացվել է «Բարության դասեր» ծրագիրը Երևանի քաղաքապետարանի ենթակայության 24 դպրոցներում, ապա կազմակերպվել «Իմ ներառող դպրոցը» խորագրով միջոցառումներ շուրջ 15 դպրոցներում: «Մենք կարող ենք» մտավոր խնդիրներ ունեցող երիտասարդների, երեխաների և նրանց ընտանիքների շահերի պաշտպանության ՀԿ-ի հետ համագործակցաբար կազմակերպվել է «Արեգակ» վեբ հավելվածի շնորհանդես շուրջ 10 դպրոցներում	1. Աշխատակազմի հանրակրթության վարչություն, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն 2021թ. ընթացքում 2. Աշխատակազմի հանրակրթության վարչություն, Տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոններ 2021թ. ընթացքում 3. Աշխատակազմի հանրակրթության վարչություն, «Հուլիսի կամուրջ» ՀԿ, «Մենք կարող ենք» ՀԿ 2021թ. ընթացքում	
4	Մրցունակ կրթության ապահովմանն ուղղված աշխատանքների կազմակերպում և աջակցություն	1. Դպրոցների էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությանն առնչվող գիտելիքների զարգացման նպատակով խորհրդատվական հանդիպումների կազմակերպում:	1. Կազմակերպվել են Դպրոցների օպերատորների կարողությունների զարգացմանը միտված սեմինարներ՝ ԿՏԱԿ-ի հետ համագործակցաբար:	1. Աշխատակազմի հանրակրթության վարչություն, ԿՏԱԿ 2021թ. ընթացքում	

		2. Հեռավար կրթության կազմակերպման, մշտադիտարկման, հարթակների կիրառման գիտելիքների զարգացմանը միտված սեմինարների կազմակերպում: 3. Դասալրոցներում կրթական էլեկտրոնային ռեսուրսների կիրառման խրախուսում՝ վերապատրաստման ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տեղայնացման, ուսուցիչների մասնակցության խրախուսման միջոցով: 4. Մեղիագրագիտության գիտելիքների փոխանցման նպատակով սեմինարների իրականացում:	2. Հեռավար կրթության կազմակերպման արդյունավետությունը, ինչպես նաև էլեկտրոնային կրթական ռեսուրսների օգտագործումը խթանելու նպատակով Իմ դպրոց կրթական կայքի հետ համագործաբար կազմակերպվել է մաթեմատիկայի առցանց մրցույթ: 3. ՄԻՊ գրասենյակի կողմից կազմակերպված «Մեծահասակները և երեխաները թվային աշխարհում» վերապատրաստման ծրագրին ապահովվել է ինֆորմատիկայի ուսուցիչների մասնակցությունը: 4. Մայերգեյթ կիբերանվտանգության դպրոցի հետ համագործակցաբար կազմակերպվել են մեղիագրագիտության և կիբերանվտանգության վերաբերյալ դասընթացներ երևանյան շուրջ 20 դպրոցներում՝ «Երիտասարդ ծրագրավորողներ» ՀԿ-ի հետ համագործակցաբար ծրագրավորման մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ են անցկացվել շուրջ 10 դպրոցների աշակերտների հետ:	2. Աշխատակազմի հանրակրթության վարչություն 2021թ. ընթացքում 3. Աշխատակազմի հանրակրթության վարչություն, ՄԻՊ գրասենյակ 2021թ. ընթացքում 4. Աշխատակազմի հանրակրթության վարչություն, Մայերգեյթ կիբերանվտանգության դպրոց, «Երիտասարդ ծրագրավորողներ» ՀԿ 2021թ. ընթացքում	
5	Արտակարգ ընդունակություններով դպրոցականների հայտնաբերում և խրախուսում	Մոմորոդների ինտելեկտուալ կարողությունների զարգացմանը նպաստելու նպատակով դպրոցական առարկայական օլիմպիադաների տարածքային, քաղաքային փուլերի կազմակերպում և անցկացում. լավագույնների խրախուսում:	ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի՝ Երևանի քաղաքային փուլին փաստացի մասնակցած սովորողներից 517-ը իրավունք են ստացել մասնակցել օլիմպիադայի հանրապետական փուլին, 168-ն արժանացել են դիպլոմների՝ ըստ հետևյալի. 1-ին կարգ՝ 41 աշակերտ, 2-րդ կարգ՝ 44 աշակերտ, 3-րդ կարգ՝ 83 աշակերտ: Գովասանագրերի է արժանացել 103 աշակերտ:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն 1-ին, 2-րդ եռամսյակներ	
6	Աջակցություն սովորողների արժեհամակարգի ձևավորման գործընթացին	Աշակերտների մեջ զարգացնել նախաձեռնողականությունը, պատրաստականությունը արտակարգ իրավիճակներում, նպաստել արժեքային կրթությանը:	1. Քաղաքացիական պաշտպանություն - «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի հետ համագործակցաբար կազմակերպվել է սեյսմիկ պաշտպանության վարքականոնների ուսուցման կենտրոնացված դասընթաց, որը տեղայնացվել է դպրոցներում, Դպրոցներում կազմակերպվել են տարահաման վարժանքներ, ինչպես նաև հրդեհային անվտանգության տարաբնույթ միջոցառումներ: Արդյունքում ակտիվ մասնակցություն ցուցաբերած 25 դպրոցների տրամադրվել են բաց հրշեջ վահանակներ, 26 դպրոցների՝ փոշեմարման կրակմարիչներ, 3 դպրոցների տանիքները մշակվել են հակահրդեհային սողորման նյութով:	1. Աշխատակազմի հանրակրթության վարչություն, «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ	

			2. Կիրառական ռազմագիտություն – Երևանի ենթակայության միջնակարգ դպրոցների աշակերտների մասնակցությամբ կազմակերպվել է եռօրյա ծրագիր Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանում: Կազմակերպվել է հրաձգության մրցաշար, որում հաղթող ճանաչվող աշակերտի դպրոցում կառուցվել է արգելազոտի: 3. Հանրային առողջություն – Դպրոցներում կազմակերպվել է ճանապարհային անվտանգության կանոնների ուսուցմանը միտված ծրագիր: «Միասին կարող ենք» ՀԿ-ի հետ համագործակցաբար 12 միջնակարգ դպրոցներում անցկացվել են կախվածությունների կանխարգելմանը միտված սեմինարներ՝ մանկավարժների և ծնողների ներգրավմամբ: Դպրոցներում հայտարարված «Մպորտային շաբաթ» մրցույթ-միջոցառման արդյունքում 13 դպրոցների տրամադրվել է մարզական գույք:	2. Աշխատակազմի հանրակրթության վարչություն, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ 3. Աշխատակազմի հանրակրթության վարչություն, «Միասին կարող ենք» ՀԿ 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ	
7	Աշակերտական խորհուրդների գործունեության խրախուսում	1. Աշակերտական կոնֆերանսի կազմակերպում՝ արդի թեմաներով՝ ռիսկային վարքագիծ, բուլինգ, հայրենասիրության արդի ընկալումները և այլն: 2. Հանրակրթության վարչությանը կից աշակերտական խորհրդի ձևավորում 3. Մտքերի գեներացիայի խթանման և համակարգման հմտությունների, ծրագրային առաջարկների մշակման նախնական գիտելիքների փոխանցման դասընթացի անցկացում:	1. Երևանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության նախաձեռնությամբ կազմակերպվել է երեխաների պաշտպանության օրվա առթիվ աշակերտական ավագանու նիստ, որի շրջանակում աշակերտները ներկայացրել են զեկույցներ, քննարկել իրենց հուզող խնդիրները:	1. Աշխատակազմի հանրակրթության, երեխաների և սոցիալական պաշտպանության վարչություններ, Աշխատակազմի հանրակրթության վարչություն 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ	
			2. «Երիտասարդները հանուն զարգացման» հիմնադրամի հետ համագործակցաբար իրականացվել է «Աշակերտական խորհուրդների կարողությունների զարգացում» ծրագիրը երևանյան 4 դպրոցներում	2. «Երիտասարդները հանուն զարգացման» հիմնադրամ Աշխատակազմի հանրակրթության վարչություն, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ	
			3. Իրականացվել է մտքերի գեներացիայի խթանման և համակարգման հմտությունների, ծրագրային առաջարկների մշակման նախնական գիտելիքների փոխանցման 7-օրյա դասընթաց՝ 153 դպրոցների 306 աշակերտների մասնակցությամբ	3. Աշխատակազմի հանրակրթության վարչություն, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ	

8	Կրթական հաստատությունների ընթացիկ գործունեության մշտադիտարկում	1.Քննարկման կազմակերպում՝ Էլեկտրոնային եղանակով դպրոցների կողմից իրականացվող գործողությունների նկատմամբ Վարչության մասնագետների համար կիրառելի վերահսկողության գործիքի ներդրման հնարավորության վերաբերյալ: 2.Հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Կրթության տեսչական մարմնի արձանագրած հիմնական խախտումների վաղ հայտաբերման նպատակով պարբերական ուսումնասիրությունների իրականացում: 3. Առնվազն եռամսյակային պարբերականությամբ հանդիպումների կազմակերպում դպրոցական կրթության բաժնի մասնագետների և սպասարկման շրջանների տնօրենների հետ՝ մասնագետի և տնօրենների կողմից առաջարկված, Վարչության պետի կողմից հաստատված օրակարգով:	1. ԴԿՏՀ համակարգում Երևանի քաղաքապետարանին ընձեռնվել է հնարավորություն դիտարկելու հարթակում դպրոցների կողմից իրականացվող գործողությունները: 2. Առանձնացվել և խմբավորվել են հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ Կրթության տեսչական մարմնի արձանագրած հիմնական խախտումները, որոնց կանխարգելման նպատակով դպրոցների տնօրենների համար կազմակերպված դասընթացի շրջանակում ներկայացվել են դրանց առնչվող իրավական կարգավորումները, քննարկվել ընթացակարգերը: 3. Աշխատակազմի հանրակրթության վարչության պետի և դպրոցական բաժնի մասնագետների կողմից դպրոցների տնօրենների հետ պարբերաբար անցկացվել են առցանց խորհրդատվություններ:	1.Աշխատակազմի հանրակրթության վարչություն, ԿՏԱԿ, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ 2. Աշխատակազմի հանրակրթության վարչություն, Կրթության տեսչական մարմին, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ 3. Աշխատակազմի հանրակրթության վարչություն, 2-րդ, 3-րդ, 4-րդ եռամսյակներ	
9	Նյութատեխնիկական բազայի նախադպրոցական ուսումնական հաստատություններում	Երևանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում նյութատեխնիկական բազայի վերգինում՝ հիմնագրի և օբյեկտով չարգելված այլ միջոցների հաշվին:	1.Երևանի քաղաքապետի 23.07.2021թ. հ.684-Ա որոշման համաձայն ամբողջությամբ թարմացվել է թվով 13 հիմնանորոգված մանկապարտեզների կոշտ գույքը, ինչպես նաև հատկացվել է խոհանոցային սպասք գործող խմբերի երեխաների թվով: 2. Երևանի քաղաքապետի 26.07.2021թ. հ.685-Ա որոշման համաձայն Երևանի մանկապարտեզներին՝ ըստ նախնական ներկայացված հայտերի հատկացվել է կոշտ գույք /եռահարկ մահճակալ, երկհարկանի մահճակալ, մանկական զգեստապահարան, մանկական սեղան և աթոռներ ինչպես նաև աշխատանքային աթոռներ անձնակազմի համար:	Աշխատակազմի հանրակրթության և գնումների վարչություններ: 2021թ. ընթացքում	
10	Գործընթացների կառավարում	Մանկապարտեզների սննդի գնման, բաշխման, ինչպես նաև վերանորոգման, և հարակից այլ գործողությունների համար մշակել կամ ներդնել ավտոմատացված համակարգեր, որոնք հնարավորություն կտան ցանկացած տեսակի և բնույթի տեղեկատվություն կարճ ժամանակում վերարտադրել ու դրա հիման վրա կատարել	Ընթանում են աշխատանքներ մանկապարտեզների սննդի գնման, բաշխման, ինչպես նաև վերանորոգման, և հարակից այլ գործողությունների համար մշակման և ներդրման աշխատանքները:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն, 2021թ. ընթացքում	

		վերլուծություններ՝ օպտիմալացնելով աշխատանքային գործընթացները:			
11	Մարդկային ռեսուրսների կառավարում	Նախադպրոցական կրթության ոլորտում ընդգրկված անձնակազմերի մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների, հմտությունների կատարելագործում վերապատրաստման դասընթացների միջոցով:	1. ՀՀ սննդի անվտանգության տեսչության մարմնի մասնագետների ներգրավմամբ իրականացվել են սննդամթերքի հիգիենային ներկայացվող տեխնիկական կանոնակարգի պահանջների իրազեկման աշխատանքներ:	1. Աշխատակազմի հանրակրթության վարչություն, Սննդի անվտանգության տեսչական մարմին, 3րդ, 4-րդ եռամսյակ	
			2. Երևանի քաղաքապետարանի և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի համագործակցությամբ իրականացվել են Երևանի մանկապարտեզների հոգեբանների և լոգոպեդների 8-ժամյա վերապատրաստման դասընթացներ:	2. Աշխատակազմի հանրակրթության վարչություն, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 3րդ, 4-րդ եռամսյակ	
			3. Երևանի քաղաքապետարանի և ԿԶՆԱԿ-ի կողմից կազմակերպվել է «Նախադպրոցական կրթության հիմնախնդիրներ» թեմայով քննարկում, ինչպես նաև նոր «Նախադպրոցական կրթական համալիր ծրագրի» վերաբերյալ առցանց քննարկում:	3. Աշխատակազմի հանրակրթության վարչություն, ԿԶՆԱԿ, 3րդ, 4-րդ եռամսյակ	
			4. Կազմակերպվել է Երևանի քաղաքապետարանի մանկապարտեզների տնօրենների հմտությունների կարողությունների արդյունավետության բարձրացման արտագնա 3-օրյա դասընթաց:	4. Աշխատակազմի հանրակրթության վարչություն, 3րդ, 4-րդ եռամսյակ	
			5. ՅՈՒՆԻՄԵՖ-ի հայաստանյան գրասենյակի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպվել է «Նախադպրոցական ոլորտի խնդիրներ» թեմայով առցանց քննարկում:	5. Աշխատակազմի հանրակրթության վարչություն, ՅՈՒՆԻՄԵՖ հայաստանյան գրասենյակ և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, 3րդ, 4-րդ եռամսյակ	
			6. Երևանի քաղաքապետարանի և ՅՈՒՆԻՄԵՖ-ի հայաստանյան գրասենյակի և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի համագործակցությամբ՝ կայացել է «Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների զարգացման ուղիները» թեմայով աշխատաժողով:	6. Աշխատակազմի հանրակրթության վարչություն, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 3րդ, 4-րդ եռամսյակ	
			7. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության նախաձեռնությամբ իրականացվել է Երևանի ենթակայության	7. Աշխատակազմի հանրակրթության վարչություն,	

			մանկապարտեզների մեթոդիստների, դաստիարակների, պարուսույցների, երաժշտության դաստիարակների, ֆիզիքահանգիչների 2-օրյա վերապատրաստման գործընթաց: Շուրջ 600 մասնագետներ ստացել են մասնակցության հավաստագրեր:	3րդ, 4-րդ եռամսյակ	
12	Մանկապարտեզների գույքի թարմացում	Մանկապարտեզների գույքի նորացում. կոշտ գույք (երեխաների և աշխատակազմի համար) կենցաղային տեխնիկա խոհանոցային սպասք	1. Երևանի քաղաքապետի 23.07.2021թ. հ.684-Ա որոշման համաձայն՝ նորացվել է թվով 13 հիմնանորոգված մանկապարտեզների կոշտ գույքը, ինչպես նաև հատկացվել է խոհանոցային սպասք՝ գործող խմբերի երեխաների թվով: 2. Երևանի քաղաքապետի 26.07.2021թ. հ.685-Ա որոշման համաձայն՝ Երևանի մանկապարտեզներին՝ ըստ նախնական ներկայացված հայտերի հատկացվել է կոշտ գույք /եռահարկ մահճակալ, երկհարկանի մահճակալ, մանկական զգեստապահարան, մանկական սեղան և աթոռներ ինչպես նաև աշխատանքային աթոռներ անձնակազմի համար:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն 2021թ. ընթացքում	
13	Մանկապարտեզների շենքերի հիմնանորոգում	Թվով 69 մանկապարտեզների շենքերի հիմնանորոգում	1. Հիմնանորոգվել են հհ.5,20,21,35,36,76,88,90,97,98,99, 104,107,112 մանկապարտեզները 2. Հիմնանորոգման աշխատանքներն ընթանում են հհ.22,23,47,48,49,58,81,82,86,127,144,146,109,110,161 մանկապարտեզները 3. Քանդման և նորի կառուցման աշխատանքներ են ընթանում հհ.74,135,138 մանկապարտեզները 4. Թվով 10 մանկապարտեզների համար կազմվել են նախագծանախահաշվային փաթեթներ հհ.1,15,63,77,95,137,143,147,44,50,61 5. Թվով 15 մանկապարտեզների նախագծանախահաշվային փաթեթները ևս առկա են:	Աշխատակազմի հանրակրթության, շինարարության և բարեկարգման վարչություններ, Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ 2021թ. ընթացքում	
14	Նախադպրոցական կրթության մատչելիություն	Ծրագրի հիմնական նպատակն է մեկնարկային հավասար պայմանների ապահովմամբ երեխաների սահուն անցումը դպրոց: Շենքերի հիմնանորոգում, գույքի նորացում: Հերթագրված երեխաների ընդունելության հիմնախնդրի կարգավորում: Մանկապարտեզներում համընդհանուր ներառման գործընթացի իրականացում:	1. Թվով 14 մանկապարտեզների հիմնանորոգում, 2. Թվով 161 մանկապարտեզների նոր գույքի տրամադրում, 3. Նոր խմբերի ձևավորում հիմնանորոգված մանկապարտեզների ազատ խմբասենյակներում: 4. Տարբեր հասարակական կազմակերպությունների և Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ կազմակերպված վերապատրաստման դասընթացների կազմակերպում՝ մանկապարտեզների տնօրենների, մանկավարժական անձնակազմի համար: Հեռավար վերապատրաստման գործընթացի կազմակերպում՝ դաստիարակների համար:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն 2021թ. ընթացքում	
15	Համակարգի արդյունավետության բարձրացում և արդիականացում	Համակարգի արդյունավետության բարձրացում և արդիականացում, մասնավորապես, էլեկտրոնային կառավարման ներդրմամբ,	Երևանի քաղաքապետարանի, Երևանի վարչական շրջանների և Երևանի մանկապարտեզների համատեղ աշխատանքները /փաստաթղթաշրջանառությունը/ իրականացվում է	Աշխատակազմի հանրակրթության վարչություն, Երևանի վարչական	

		փաստաթղթաշրջանառության օպտիմալացման միջոցով	gmail էլեկտրոնային հարթակում բացված համապատասխան էլեկտրոնային փոստի, ինչպես նաև «Մանկապարտեզ» կառավարման համակարգի միջոցով:	շրջանների կրթության , մշակույթի և սպորտի բաժիններ, 2021թ. ընթացքում	
16	Համակարգի արդյունավետության հաշվետվողականության և հետադարձ կապի մեխանիզմների բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում, մասնավորապես, մշտադիտարկման համակարգի ներդրում	Համակարգի արդյունավետության հաշվետվողականության և հետադարձ կապի մեխանիզմների բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում	Ընթանում են աշխատանքներ համակարգի արդյունավետության հաշվետվողականության և հետադարձ կապի մեխանիզմների բարելավման և ներդրման ուղղությամբ:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն, 2021թ. ընթացքում	
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1	Մայրաքաղաքի գործընկերային հարաբերությունների ընդլայնում	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝ - ստորագրել համագործակցության համաձայնագրեր Քաթարի մայրաքաղաք Դոհայի, Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայի, Սլովենիայի մայրաքաղաք Լյուբլյանայի, Եգիպտոսի Արաբական Հանրապետության մայրաքաղաք Կահիրեի, ԻԻՀ Շիրազ, Ղրղզստանի մայրաքաղաք Բիշկեքի, Ղազախստանի մայրաքաղաք Նուր-Սուլթանի հետ: - ակտիվացնել համագործակցության կապերը արդեն իսկ կնքված համագործակցության համաձայնագրերի շրջանակներում /Փարիզ, Լոս Անջելես, Վենետիկ, Ռիգա, Մոֆիա, Աթենք, Բեյրութ, Լիոն, Մարսել, Քեմբրիջ (ԱՄՆ) և այլն/,	Երևան քաղաքի և Դոնի Ռոստովի վարչակազմի միջև ստորագրվել է 2021-2025 համագործակցության ծրագիր: Երևանի քաղաքապետարանի պատվիրակության Մանկո Պետերբուրգ պաշտոնական այցի շրջանակներում ստորագրվել է 2021-2025 համագործակցության ճանապարհային քարտեզը: Ստորագրվել է համաձայնագիր Երևանի Դավթաշեն վարչական շրջանի և ԳԴՀ Մուգենշտուրմ քաղաքի միջև: Երևանի ու Գերմանիայի Սաքսոնիա երկրամասի Լայպցիգ քաղաքի միջև ստորագրվել է բարեկամական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ մտադրությունների հուշագիր: Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության հերթական համաժողովը, որը մի քանի անգամ հետաձգվել էր COVID -19 համաճարակի պատճառով, նախատեսվում է անցկացնել 2022 թվականի հունիսին: Երևան քաղաքը պատասխանատու է համաժողովի «Համայնքներ կայուն զարգացում» աշխատախմբում: Նախապատրաստական աշխատանքներ են տարվել՝ համաժողովի մասնակցության նպատակով:	09.06.2021 29.11.2021-01.12.2021 14.09.2021	2021թ. աշնանը նախատեսվում էր Փարիզի քաղաքապետի այցը Երևան, որն այս պահի դրությամբ հետաձգվել է կորոնավիրուսային համաճարակի հետևանքով: Համագործակցության շրջանակներում նախատեսվում էր փորձի փոխանակման ծրագիր և փոխայցելություններ կազմակերպել, սակայն աշխատանքները հետաձգվել են COVID-19 համաճարակի

	- թարմացնել համագործակցության համաձայնագրերը ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի Քեմբրիջ քաղաքի, Մոնտենեգրոյի մայրաքաղաք Պոդգորիցայի, Բելառուսի մայրաքաղաք Մինսկի, Իտալիայի Տոսկանա և Կանադայի Մոնրեալ քաղաքների հետ, - Երևանի քաղաքապետարանի և Սանկտ Պետերբուրգի կառավարության միջև կնքված համագործակցության ծրագրի շրջանակներում նախատեսվում է անցկացնել Երևանի օրերը Սանկտ Պետերբուրգում, - Աջակցել ներդրումային միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովմանը, գործընկեր քաղաքներում ներդրումային շնորհանդեսների կազմակերպմանը, - ակտիվացնել Երևանի՝ տնտեսապես զարգացած գործընկեր քաղաքներից Երևան գործարար այցելությունների կազմակերպման աշխատանքները, - ակտիվացնել կապերը Երևանի քաղաքապետարանի և գործընկեր քաղաքների տուրիզմի պատասխանատուների միջև, - իրականացնել եղբայրության պուրակներ և զբոսայգիներ հիմնելու ծրագրեր, - խրախուսել և ընդլայնել վարչական շրջանների և գործընկեր քաղաքների, ինչպես նաև խոշոր քաղաքների վարչական միավորների միջև համագործակցությունը, - տրամադրել տեղեկատվություն Երևանի գործընկեր քաղաքներին Երևանում	Մարսելի հետ համագործակցության շրջանակներում համաձայնակային և հետպատերազմական շրջանում մեծ քանակությամբ դեղորայքային հումանիտար աջակցություն է տրամադրվել: Ներկայումս հարցում է ուղարկվել հնարավոր դեղամիջոցների տրամադրման համար համաձայնակային իրավիճակի հաղթահարման նպատակով:		պատճառով: Ոլորտներ՝ առողջապահություն, կրթություն, զբոսաշրջություն, տրանսպորտ: Նախանշված աշխատանքների կատարումը հետաձգվել է COVID-19ի սահմանափակումների պատճառով
--	--	--	--	---

		անցկացվելիք միջոցառումների և փառատոնների վերաբերյալ:			
2	Միջազգային համագործակցությունների շրջանակներում համատեղ ծրագրերի մշակում և միջոցառումների իրականացում	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝ - ակտիվացնել աշխատանքները սփյուռքի կառույցների և ՀՀ դիվանագիտական հաստատությունների հետ կոնկրետ ծրագրերի ներկայացման առումով, համագործակցել միջազգային և տարածաշրջանային կառույցների շրջանակներում, - ցուցաբերել ակտիվ մասնակցություն AIMF-ի ամենամյա գագաթաժողովներին, կազմակերպել փոխայցելություններ ֆրանսիական քույր և գործընկեր քաղաքների հետ և մշակել համատեղ ծրագրեր, - ցուցաբերել ակտիվ մասնակցություն «Եվրոսիթիս» ասոցիացիայի աշխատանքներին, ինչպես նաև ապահովել հնարավոր ներգրավում Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրերին, - ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս գործող միջազգային և տարածաշրջանային կառույցների հետ բանակցությունների վարում՝ տեխնիկական օժանդակության տրամադրման վերաբերյալ, - իրականացնել ԱՄՆ Լոս Անջելես քաղաքի հետ համատեղ ծրագրեր - իրականացնել Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի քաղաքի հետ համատեղ ծրագրեր, - իրականացնել Հորդանանի Հաշիմյան Թագավորության մայրաքաղաք Ամմանի հետ համատեղ ծրագրեր, - իրականացնել ՀՀ մարզերի և ԱՀ շրջանների հետ համատեղ ծրագրեր:	Ֆրանկոֆոն քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի հետ համագործակցության շրջանակներում աշխատանքներ են տարվել 2018 թվականին Երևանի քաղաքապետարանի և ՖՔՄԱ ի միջև կնքված «Էրեբունի հնավայրի պահպանման և վերանորոգման աշխատանքների իրականացման ֆինանսական և տեխնիկական աջակցության» համաձայնագրի վերականգնման ուղղությամբ: Երևանի և Ստեփանակերտի միջև ստորագրվել է 2021-2023թթ. համագործակցության ծրագիր: Որպես «Երևան-Ստեփանակերտ» թարմացված համագործակցության ծրագրերի մեկնարկ Հանրապետության հրապարակյին հարող Խաչքարերի պուրակում բացվել է «Արցախի բարիքներ» ցուցահանդես-տոնավաճառը:	31.05.2021	30.05.2021
3	Համագործակցությունների շրջանակում քաղաքապետարանի	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է քաղաքապետարանի	Քույր և գործընկեր քաղաքներ են ուղարկվել հարցումներ (հիմնվելով եկամուտների զանձման և հաշվառման, ֆինանսական վարչությունների		

	կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատակիցների կարողությունների բարձրացում	կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև քաղաքապետարանի ենթակայության հաստատությունների աշխատակիցների վերապատրաստումների կազմակերպում և փորձագիտական աջակցություն, անհրաժեշտության դեպքում նաև օտար լեզուների դասընթացների կազմակերպում: Ծրագրի շրջանակներում կիրականացվեն նաև փորձի փոխանակման ծրագրեր քույր և գործընկեր քաղաքների հետ համագործակցությունների շրջանակում, որը կներառի - Երևանի և Թեհրանի քաղաքապետարանների ներկայացուցիչների փոխալցելություններ, - Երևանի քաղաքապետարանի և Լիոնի Մետրոպոլի միջև համագործակցություն, - Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի և Երևանի քաղաքապետարանի միջև համագործակցության շրջանակներում մասնագիտական սեմինարների և փորձի փոխանակման ծրագրի շարունակական իրականացում՝ ֆրանսիական առաջատար մասնագետների մասնակցությամբ:	դիմումների վրա) փորձի փոխանակման և աշխատանքների կազմակերպման մեթոդներին ծանոթանալու նպատակով: Ֆրանսիական կողմի հետ աշխատանքներ են տարվել և մշակվել է Երևան-Իլ դը Ֆրանս համագործակցության եռամյա պայմանագիրը: Ոլորտներ՝ տրանսպորտ, աղբահանություն, ուրբանիզմ:		
--	--	---	---	--	--

Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1	«Արտադպրոցական դաստիարակություն» ծրագիր (երաժշտական և արվեստի դպրոցներ)	Երաժշտական և արվեստի դպրոցներում դպրոցահասակ երեխաների մշակութային նախնական մասնագիտական կրթության, արտադպրոցական գեղագիտական դաստիարակության, երաժշտարվեստի և արվեստների ուսուցման իրականացում:	Երաժշտական և արվեստի դպրոցներում շարունակվել են երեխաների մշակութային նախնական մասնագիտական կրթության, արտադպրոցական գեղագիտական դաստիարակության, երաժշտարվեստի և արվեստների ուսուցման իրականացումը, որոնք եզրափակվել են ուսումնական տարվա ավարտի հաշվետու համերգներով:	Երևանի ենթակայության երաժշտական և արվեստի դպրոցներ 2021թ. հունվար-դեկտեմբեր	

			Դպրոցների աշակերտները մասնակցել են մրցույթների և ցուցահանդեսների՝ շահելով մրցանակներ և դիպլոմներ:		
